

Ծագրի դասիչը	<u>1013</u>
Միջոցառման դասիչը	<u>11001</u>

Ծրագրի անվանումը

«Փորձաքննությունների ծառայություններ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ
(«ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
պետական ոչ առևտրային կազմակերպություն»)

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ պետական բյուջեի 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի պետական պատվերի հայտի

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծվել է «2001 թվականի հունիսի 11-ի ՀՀ Կառավարության և ԱՄՆ-ի Կառավարության միջև թմրամիջոցների հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» միջկառավարական համաձայնագրի շրջանակներում ՀՀ Կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1127-Ն որոշմամբ (ՀՀ կառավարության 23 հունիսի 2005 թվականի N 867-Ն և 11 հունիսի 2009 թվականի N 638-Ն որոշումներով փոփոխված և լրացված): Կազմակերպության գործունեության առարկան է հանդիսանում փորձագիտության բնագավառում գիտահետազոտական, գիտաուսումնական, գիտամեթոդական, գիտափորձնական-վերլուծական աշխատանքների կատարումը, որն իրականացվում է համաձայն կանոնադրությամբ ամրագրված հետևյալ հիմնական տեսակի գործառույթների.

➤ Գիտական աշխատանք՝

- փորձաքննությունների իրականացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների մշակումներ, փորձարկումներ և ներդրում,
- դատական փորձագիտական ոլորտի կանոնակարգմանը և զարգացմանը նպաստակառուղիված մեթոդաբանության մշակում,
- հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրում, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների գիտական մշակում և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստում,
- պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերի քրեաբանական հետազոտությունների կատարում,
- զանգվածային լրատվամիջոցների կողմից նախապատրաստվող (նախապատրաստված) հաղորդումների, հրապարակումների քրեաբանական հետազոտությունների կատարում,
- քրեաբանական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական, տնտեսագիտական, հոգեբանական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և հասարակական այլ գիտությունների բնագավառներում հարցումների, մշակումների, վերլուծությունների կազմակերպում:

➤ **Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում՝**

- փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցում և վերապատրաստում,
- փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստում և կատարելագործում:

➤ **Իրավասու և իրավաստեղծ մարմինների կողմից նշանակված դատական և քրեաբանական փորձաքննությունների կազմակերպում և իրականացում:**

Հարկ է նշել, որ 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսական ծրագիրը նպատակաուղղված է Կազմակերպության կանոնադրական գործառույթներից իրավասու մարմինների կողմից նշանակված դատական փորձաքննությունների կատարման ապահովմանը:

Ինչպես հայտնի է դատական փորձաքննությունները կատարվում են հետաքննության, նախաքննության մարմնի իրավասու աշխատակցի կամ դատարանի որոշման հիման վրա՝ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբանման համար գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառում հատուկ գիտելիքների կիրառման անհրաժեշտության դեպքում: Փորձաքննությունների նշանակման և կատարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քրեական, քաղաքացիական և վարչական օրենսգրքերով, ինչպես նաև ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով: Վերջիններով սահմանված է նաև փորձաքննությունների նշանակման և կատարման կարգը:

Միաժամանակ, կարևոր է արձանագրել, որ դատավարական օրենսդրությամբ կանոնակարգված է նաև փորձաքննությունների կատարման ընթացքում կրած ծախսերի հատուցումը: Ընդ որում, եթե քաղաքացիական, վարչական գործերով դատարանի կողմից նշանակված փորձաքննությունների անցկացման ծախսերի հատուցումը նախատեսված է հայցվոր կամ պատասխանող կողմի միջոցների հաշվին, իսկ պայմանագրային հիմունքներով իրականացվող (համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի) փորձաքննությունների ծախսերը՝ պատվիրատուի հաշվին, ապա քրեական դատավարական կարգով նշանակված փորձաքննությունների անցկացման ծախսերի հատուցումը նախատեսվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

2020 թվականի համար «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսական ծրագրով ներկայացվող բյուջետային ֆինանսավորման հայտը կազմելիս հաշվի են առնվել դատական փորձաքննությունների տեսականու և ծավալների վերաբերյալ տարբեր փորձագիտական կառույցներում 2019 թվականին տեղադրված պետական պատվերը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ

առևտրային Կազմակերպության 2018 թվականի և 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված դատական փորձաքննությունների քանակային ցուցանիշների վերլուծությունը, 2019 թվականի ինը ամիսների հիմնավորված կանխատեսումները, 2020 թվականի վերաբերյալ Կազմակերպության առջև դրված խնդիրները և պլանային հնարավորությունները:

Կազմակերպությանը համապատասխան իրավասու մարմինների կողմից նշանակվող դատական փորձաքննությունների ոլորտի զարգացման միտումների ուսումնասիրման նպատակով առավել մանրամասն վերլուծվել են ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային Կազմակերպության վերջին երկու տարիների ցուցանիշները: Այդ առումով պետք է նշել, որ.

2017 թվականի պետական բյուջեից 01 բաժնի 06 խմբի 03 դասի «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագիրը Կազմակերպության համար հաստատվել էր 304372.1 հազ. դրամի չափով, որն էլ ամբողջությամբ կատարվել է 2017 թվականի դեկտեմբերի 18-ի դրությամբ: Ընդ որում կարևոր է փաստել, որ վերջիններիցս զգալի քանակ են կազմել մեծածավալ, բազմաօբյեկտանի համալիր և հանձնաժողովային փորձաքննությունները:

Ինչ վերաբերում է 2018 թվականին, ապա հարկ է նշել, որ դեռևս 2018 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ արդեն իսկ ամբողջ ծավալով կատարվել էին պետական բյուջեից 01 բաժնի 06 խմբի 01 դասի «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով 2018 թվականի համար հաստատված 284359.0 հազ. դրամ գումարը, իսկ 2018թ-ի դեկտեմբերի 18-ի դրությամբ՝ ծրագրով ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից լրացուցիչ հատկացված 69244.5 հազ.դրամ գումարը, այսինքն ծրագիրը 2018 թվականի ընթացքում ամբողջությամբ իրականացվել է 353603.5 հազ.դրամի չափով:

Ստորև բերվում է Կազմակերպությունում 2017-2018 թվականների ընթացքում պետական պատվերի շրջանակներում իրականացված դատական փորձաքննությունների քանակների վերաբերյալ ամփոփ տվյալներ պարունակող աղյուսակը.

Աղյուսակ N 1

N	Տարեթիվ	Կատարված դատական փորձաքննությունների քանակական ցուցանիշները (համաձայն տարեկան կտրվածքով ներկայացված կատարողականների)	
		քանակային ցուցանիշը (հատ)	տեսակների քանակը (հատ)
1	2017	11306 (առ. 18.12.2017)	29 (122 փորձագիտական ենթատեսակներով և տեխնոլոգիական ուղղություններով)
2	2018	9825 (առ. 18.12.2018)	29 (122 փորձագիտական ենթատեսակներով և տեխնոլոգիական ուղղություններով)

Նախորդ տարիների նկատմամբ 2017-2018 թվականների ընթացքում Կազմակերպությանը նշանակվող փորձաքննությունների քանակային ցուցանիշների զգալի աճի հետ կապված կարևոր է արձանագրել, որ այն ունի իր օբյեկտիվ պատճառները, որոնցից հիմնականները հետևյալն են.

- Կազմակերպությունը աստիճանաբար ընդլայնել է իրականացվող փորձաքննությունների տեսականին և ներկայումս իրականացնում է փորձաքննություններ 29 պլանավորված փորձագիտական տեսակների շրջանակներում 122 փորձագիտական ենթատեսակներով և տեխնոլոգիական ուղղություններով: Ընդ որում՝ փորձագիտական ստորաբաժանումներում իրականացվող փորձաքննությունների տեսակների շրջանակներում 2017-2018 թվականների ընթացքում Կազմակերպությունը սկսել է իրականացնել փորձաքննություններ նաև նոր ենթատեսակներով և տեխնոլոգիական ուղղություններով: Վերջիններիս արդյունքները նշանակալիորեն բարելավել են համապատասխան գործերով նախաքննության հնարավորությունները և որպես հետևանք էապես աճել են դրանց կիրառմամբ իրականացվող փորձաքննությունների նշանակման դեպքերը:

- Փորձաքննությունների ազգային բյուրոյում ներդրվել է «Cellebrite UFED Touch Ultimate» փորձագիտական հետազոտական համակարգը (միակը Հայաստանում), որը բջջային հեռախոսների սպասարկման և բջջային հեռախոսներից տեղեկատվության արտաձման նորագույն տեխնոլոգիաների լավագույն համադրությունն է (սարքը հնարավորություն է ընձեռում արտածել, վերծանել և վերլուծել բջջային հեռախոսների, պլանշետային համակարգիչների և GPS սարքավորումների լայն տեսականիների հիշողություններում պարունակվող ամբողջ տեղեկատվությունը): 2017թ-ին ստեղծվել է «Cellebrite UFED» սարքի միջոցով հետազոտվող բջջային հեռախոսների օպերացիոն համակարգերի ընդհանրության և տարբերությունների վերաբերյալ գրադարան, որը պարունակում է թվով 154 գրականություն: Տվյալ սարքով աշխատելու համար մշակվել է «Cellebrite UFED» սարքի միջոցով հետազոտվող բջջային հեռախոսների օպերացիոն համակարգ» ընթացակարգը: Կարևոր է նշել, որ պարբերաբար կատարվել են «UFED Physical Analyser» ծրագրային ապահովման թարմացումներ (5.9, 6.0, 6.1, 6.2, 6.3, 6.4, 6.5 և այլն), ինչպես նաև «Cellebrite UFED» սարքի ստեղծման ժամկետից հետո ստեղծված բջջային հեռախոսներից (որոնք սարքի տվյալների բազայում առկա չեն) հետազոտության իրականացման համար «UFED Physical Analyser» գործավարական համակարգի թարմացումներ, «Android» և «iOS» օպերացիոն համակարգերի նոր տարբերակներից հետազոտության և ինտեգրման նպատակով:

Նախատեսվում է իրականացնել համակարգչային հիշողության կրիչների և բջջային սարքերի հետազոտություններ համապատասխանաբար՝ «EnCase Forensic v8.05» ծրագրային ապահովումով, «Tableau Forensic USB 3.0 SATA/IDE Bridge (T35u)» սարքերով (ապարատային բլոկիռատորներ), ինչպես նաև «Cellebrite UFED Cloud Analyzer» ծրագրային ապահովումով՝ համաձայն համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնում մշակված ապարատածրագրային միջոցների արդիականացման ծրագրի: Նշված սարքերի (ապարատային բլոկիռատորներ) կիրառման ներդրումը զգալիորեն կարագացնի համակարգչային հիշողության կրիչների

փորձագիտական պատճենների ստեղծման գործընթացը, իսկ «EnCase Forensic v8.05» ծրագրային ապահովման միջոցով հնարավոր կլինի կատարել առավել խորը և բազմակողմանի հետազոտություններ, ինչը հնարավոր չէ կատարել ներկայումս բաժնում կիրառվող «EnCase Forensic 6.15» ծրագրային ապահովման միջոցով: Բջջային սարքերի փորձագիտական հետազոտության նպատակով կիրառվող «Cellebrite UFED Cloud Analyzer» ծրագրային ապահովման միջոցով կիրականացվեն հետազոտություններ կապված բջջային սարքերի շահագործողի «ամպային» տեղեկատվության և համապատասխան բջջային հավելվածների հետ:

- Կատարվող փորձաքննությունների քանակական տվյալների ավելացմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ ավելացել է նշանակվող համալիր փորձաքննությունների քանակը: Դրանց կատարմանը ներգրավված են եղել տարբեր փորձագիտական ստորաբաժանումներ, որոնց կողմից իրականացվում են բարդ, ծախսատար և տեխնոլոգիատար համալիր փորձաքննություններ: Օրինակ՝ մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով՝ համալիր ավտոտեխնիկական, հետքաբանական, դատաբժշկական և նյութագիտական, համալիր ձգաբանական, պայթյունատեխնիկական և դատաբժշկական փորձաքննություններ, ինչպես նաև համալիր ավտոտեխնիկական, հետքաբանական և մանրաթելային փորձաքննություններ, համալիր համակարգչատեխնիկական և դիմանկարային փորձաքննություններ, համալիր շինարարատեխնիկական և ապրանքագիտական փորձաքննություններ, շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով՝ համալիր էկոլոգիական, հրդեհատեխնիկական և ապրանքագիտական, համալիր էկոլոգիական, շինարարատեխնիկական, նյութագիտական և ապրանքագիտական փորձաքննություններ:

- Կարևոր է նշել նաև, որ համաձայն վերջին տարիների վիճակագրական թվային տվյալների ապրանքագիտական, նյութագիտական, հետքաբանական, տոքսիկոլոգիական, ձեռագրաբանական, փաստաթղթաբանական, ձգաբանական, դատաբժշկական և համակարգչատեխնիկական փորձաքննությունները քանակային առումով կազմում են Կազմակերպությունում իրականացվող բոլոր փորձաքննությունների շուրջ 50 %-ը:

Հարկ է նշել, որ նման կայուն բարձր ցուցանիշի պահպանումը հնարավոր է դարձել Կազմակերպությունում այնպիսի կարևոր սարք-սարքավորումների առկայությամբ, ինչպիսիք են օրինակ նախորդ տարիներին ստացված «NITON XL3t 980 GOLDD+» դյուրատար ռենտգեն ֆլուորեսցենտային սպեկտրոանալիզատորները, Shimadzu IR Prestige-21 (FTIR) ինֆրակարմիր սպեկտրոֆոտոմետրը, Agilent/HP 6890 գազային քրոմատոգրաֆները, Agilent GC 7890A & MSD 5975C գազային քրոմատոգրաֆ-մասս սպեկտրոմետրը, «Agilent Technologies» ընկերության «55 AA» բոցային և «240Z AA» գրաֆիտային ստոմային արտաբջիռն սպեկտրոմետրերը՝ VGA-77 մոդելի հիդրիդային կցորդով, և «Cary-60» սպեկտրոֆոտոմետրը, ինչպես նաև 2017թ-ին ձեռքբերված գերմանական «RINNTECH» ֆիրմայի «LINTAB LTM06-E» մոդելի սարքը՝ «TSAP-Win» համակարգչային ծրագրային ապահովմամբ, և ծածկույթի հաստության չափման «ETARI ET-11» մոդելի սարքը: Վերջիններս նախատեսված են համապատասխանաբար.

- պարզելու համար ծառահատման վաղեմությունը, դրա իդենտիֆիկացումն ապօրինի անտառահատումների հետ կապված հարցերում՝ ծառատեսակների ընտանիքը, ծառերի հատման ժամանակային տարբերությունը, հատված ծառի ծագման տեղորոշման իդենտիֆիկացումը, փորձաքննության ներկայացված փորձանմուշները հանդիսանում են արդյոք միևնույն ծառատեսակի կտորներ, ծառի կենսական վիճակը և այլն:

- ծածկույթի հաստության չափման համար, որոնք նստեցված են սև և գունավոր մետաղների վրա, մասնավորապես՝ երկաթ պարունակող (երկաթ, պողպատ) և պղինձ, ալյումինիում, ցինկ, բրոնզ, լատուն և այլ գունավոր մետաղներ պարունակող հիմքերի վրա: Չափման հաստությունը համապատասխանաբար կազմում է 0-ից մինչև 2000 մկմ և 0-ից մինչև 1000 մկմ:

Նշված սարքերի հնարավորությունները թույլ են տվել 2018թ-ին էապես ավելացնել Կազմակերպությունում կատարվող փորձաքննությունների քանակը և հետազոտությունների տեսականին:

Հարկ է նշել, որ 2006-2010 թվականների ընթացքում Կազմակերպությունում ձևավորվել է և 2010-2018 թվականների ընթացքում կարողությունների զարգացման փուլ է անցել որակի ապահովման մասնագիտացված ստորաբաժանումը, որի կազմավորման գործընթացն իրականացվել է Կազմակերպության որակի կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ ԱՄՆ-ից ժամանած որակի կառավարման բնագավառի միջազգային մի շարք պրոֆեսիոնալ խորհրդատուների կողմից «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև թմրամիջոցների հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի (կրճատ՝ հայ-ամերիկյան INL ծրագրի) շրջանակներում: Այդ կապակցությամբ որակի ապահովման բաժնի հետ համատեղ խորհրդատուներն իրականացրել են քաղաքականությունների, ընթացակարգերի և հրահանգների փաստաթղթավորում, սահմանել են կազմակերպության խնդիրները և նպատակները՝ համաձայն ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 միջազգային ստանդարտի պահանջների, ինչպես նաև ILAC-G19 ուղեցույցի և մի շարք այլ միջազգային ստանդարտների պահանջների: Կազմակերպությունում ներդրված որակի կառավարման համակարգի (ԻՍՕ 9001 «Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» միջազգային ստանդարտի համապատասխան) գործունեության, ինչպես նաև ԻՍՕ 17025 «Փորձարկման և ստուգաճշտման լաբորատորիաների իրազեկությունը ներկայացվող ընդհանուր պահանջներ» միջազգային ստանդարտի պահանջների շրջանակներում վերոնշյալ գործող որակի ապահովման բաժնի կողմից ամենամյա ներքին աուդիտների անցկացման արդյունքում ևս շարունակական էապես բարելավվում է իրականացվող փորձաքննությունների մասնագիտական մակարդակը և նպաստում Կազմակերպությանը նշանակվող դատական փորձաքննությունների քանակների աճի պահպանմանը:

Հարկ է նշել, որ 2018 թվականի դեկտեմբերի 29-ին լրանում էր ԻՍՕ 9001:2008 «Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստման սերտիֆիկատի ժամկետը,

ուստի հաջորդ շրջափուլի համար Կազմակերպությունում կրկին իրականացվեց որակի կառավարման համակարգի սերտիֆիկացում արդեն փոխարինված ՀՍ ԻՍՕ 9001-2016 «Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» ստանդարտի պահանջներին համապատասխան Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Հարկ է նշել, որ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին և 11-ին Կազմակերպությունում բարեհաջող իրականացվեց Կազմակերպության որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման գործընթացը ՀՍ ԻՍՕ 9001-2016/ ԻՍՕ 9001:2015 «Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի աուդիտորների խմբի կողմից, և 2018 թվականի դեկտեմբերի 14-ին Կազմակերպությանը կրկին շնորհվեց համապատասխանության սերտիֆիկատ (սերտիֆիկատի գրանցման համարը՝ 001/Q-003-0011-2018) երեք տարի ժամկետով, ինչը հավաստում է, որ Կազմակերպության սերտիֆիկացման ոլորտի նկատմամբ ներդրված որակի կառավարման համակարգը համապատասխանում է ՀՍ ԻՍՕ 9001-2016 «Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» ստանդարտի պահանջներին:

Ինչպես հայտնի է, 2017 թվականին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի գնահատման խմբի գնահատումների արդյունքում Կազմակերպության ձգաբանական փորձարկման լաբորատորիային շնորհվել է հավատարմագրման վկայագիր 09.11.2017թ.-09.11.2021թ. գործողության ժամկետով, իսկ 2019 թվականի II կիսամյակի սկզբին նախատեսվում է իրականացնել նշված լաբորատորիայի ըստ գործունեության իրականացման վայրի պարբերական գնահատում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի գնահատման խմբի կողմից:

Հարկ է նշել նաև, որ Կազմակերպության ձգաբանական փորձարկման լաբորատորիան, հանդիսանալով միակ հավատարմագրված ձգաբանական փորձարկման լաբորատորիան Հայաստանի Հանրապետությունում, համապատասխանելով ՀՀ-ում գործող իրավական կարգավորումներին և գործելով ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտի պահանջներին համապատասխան, 2018 թվականին համապատասխանության գնահատման մարմին նշանակվելու նպատակով հայտ էր ներկայացրել պետական լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի օգոստոսի 16-ի հրամանով ստացել համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ ճանաչվելով համապատասխանության գնահատման նշանակված մարմին:

2017 թվականին Կազմակերպության սննդամթերքի փորձարկման լաբորատորիան նույնպես դիմել էր «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին հետագա հավատարմագրում անցնելու նպատակով և հավատարմագրման գործընթացի բոլոր փուլերը բարեհաջող ավարտելու արդյունքում 2018 թվականի օգոստոսի 30-ին Կազմակերպության սննդամթերքի փորձարկման լաբորատորիան նույնպես շնորհվել է հավատարմագրման վկայագիր 30.08.2018թ.30.08.2022թ. գործողության ժամկետով: 2019 թվականի ընթացքում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի գնահատողների խմբի կողմից կիրականացվի պարբերական գնահատում՝ ըստ Կազմակերպության սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի գործունեության իրականացման վայրի՝ ԻՍՕ 17025 ստանդարտի պահանջներով համապատասխանության հավաստման նպատակով:

ՀԱՄ-ի «[PL-07 Չափումների հետևելիության, չափման միջոցների տրամաչափարկման և չափման անորոշությունների գնահատման համար անցումային շրջան սահմանելու մասին](#)» քաղաքականության և ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտով սահմանված պահանջների համապատասխանության նպատակով 2017 թվականին իրականացվել են հավատարմագրման ոլորտի շրջանակներում առկա չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներ, կնքվել է պայմանագիր «Չափումների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ: 2018 թվականին նորից կնքվել է պայմանագիր «Չափումների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ հավատարմագրման ոլորտի շրջանակներում առկա չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներն իրականացնելու նպատակով՝ համաձայն փորձարկումների համար օգտագործվող չափման միջոցների տրամաչափարկման համապատասխան ժամանակացույցերի: Տրամաչափարկման աշխատանքների արդյունքում տրվում են տրամաչափարկման սերտիֆիկատներ «Չափումների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից մեկ տարի ժամկետով, ուստի տրամաչափարկման գործընթացի կազմակերպումը շարունակվելու է նաև 2020 թվականի ընթացքում:

2017 թվականի ընթացքում սննդամթերքի և ձգաբանական փորձարկման լաբորատորիաները մասնակցել են որակավորման ստուգումներին (proficiency testing), քանի որ այդ արդյունքները հանդիսանում են կարևոր գործիք լաբորատորիաների իրազեկությունը գնահատելու համար: Հարկ է նշել, որ սննդամթերքի փորձարկման լաբորատորիան հաջողությամբ մասնակցել է մանրէաբանական ցուցանիշներով 3 թեստերի, իսկ ձգաբանական փորձարկման լաբորատորիան մասնակցել է գնդակների նույնականացման 1 թեստի ԻՍՕ 17043 միջազգային ստանդարտով հավատարմագրված վստահելի PT պրովայդերների կողմից, և ստացել են բավարար արդյունքներ: Լաբորատորիաներին տրամադրվել է թեստերին մասնակցությունը հավաստող փաստաթղթեր: 2018 թվականի ընթացքում լաբորատորիաների՝ որակավորման ստուգումներին մասնակցությունը կազմակերպելու և ապահովելու նպատակով կազմվել է նախնական ժամանակացույց, համաձայն որի լաբորատորիաները պետք է մասնակցեն հավատարմագրման ոլորտի շրջանակներում առկա ցուցանիշներով որակավորման ստուգումներին: 2020 թվականին և յուրաքանչյուր տարի մինչև հավատարմագրման վկայագրերի ժամկետների ավարտը կվերանայվեն ժամանակացույցերը և կընդգրկվեն միայն այն ցուցանիշները, որոնցով լաբորատորիաները դեռևս չեն մասնակցել որակավորման ստուգումներին:

Մինևույն ժամանակ, միջազգային չափանիշներով առավել մրցունակ դառնալու համար, ինչպես նաև միջազգային հավատարմագրում անցնելու համար անհրաժեշտ է, որ Կազմակերպությունը հաջողությամբ հաղթահարի և հավատարմագրվի ԻՍՕ 17025 միջազգային ստանդարտի շրջանակներում, որը փորձագիտական կառույցների համար աշխարհում ընդունված որակի հավաստման կարևորագույն ինստիտուտներից մեկն է: Հարկ է նշել այդ առումով, որ դատափորձագիտական բնագավառում ԻՍՕ 17025 միջազգային ստանդարտի (ILAC G19:2014 «Դատական փորձագիտական լաբորատորիաների ուղեցույց» մոդիֆիկացիայով) լիարժեք ներդրման համար բնականաբար կպահանջվի 2019-2020 թվականների ընթացքում ինտենսիվորեն շարունակել դեռևս 2011

թվականից սկսված աշխատանքները՝ նպատակ ունենալով հնարավորինս կարճ ժամանակահատվածում աստիճանաբար իրականացնել Կազմակերպության Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի միջազգային ակրեդիտացում (հավատարմագրում) եվրոպական կամ ամերիկյան որևէ լիազոր կառույցի միջոցով: Նշենք, որ դա հնարավորություն կտա վերջապես Հայաստանի Հանրապետությունում ունենալ միջազգային հավատարմագրում ունեցող լաբորատորիաներ դատական փորձագիտության ոլորտում, ինչը էապես կնպաստի փորձագիտական ոլորտում գիտագործնական աշխատանքների և փորձաքննությունների իրականացմանը ԱՄՆ-ի, զարգացած եվրոպական երկրների և ՌԴ-ի առաջավոր փորձագիտական կառույցների որակական մակարդակով:

2017-2018 թվականների ընթացքում Կազմակերպությունում իրականացվել են Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի 3 ոլորտներով (թմրամիջոցներ, մետաղներ և համաձուլվածքներ, լաբուներկեր և ծածկույթներ) միջազգային հավատարմագրմանն ուղղված մի շարք աշխատանքներ՝ համաձայն ԻՍՕ 17025 ստանդարտով սահմանված պահանջների: Մասնավորապես՝ INL ծրագրի շրջանակներում Կազմակերպությանը տրամադրվել են մի շարք գրականություններ և փաստաթղթեր, որոնցից մի մասը INL ծրագրի աջակցությամբ տրամադրվել են նաև հայերեն թարգմանված տարբերակներով, որպեսզի դրանք ուսումնասիրվեն և տեղայնացվեն: INL ծրագրի ավարտի հետ կապված տեղի է ունեցել հանդիպում ԱՄՆ դեսպանատան պատասխանատու աշխատակիցների հետ, որի արդյունքում քննարկվել են հետագա համագործակցության հնարավոր նոր ուղիներ և ձևաչափեր, մասնավորապես 2019-2020 թվականներին հավատարմագրման գործընթացի շարունակական բնույթը ապահովելու նպատակով:

2017 թվականի փետրվարին սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի փորձագետ Նունե Անդրեասյանը մասնակցել է սննդամթերքի փորձարկումների ոլորտներին առնչվող աշխատաժողովների: Նույն տարվա փետրվար ամսին որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Սարգսյանը, սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի փորձագետ Նունե Անդրեասյանը, ձգաբանական փորձարկման լաբորատորիայի փորձագետ Վասպուր Հովհաննիսյանը մասնակցել են ներքին տրամաչափարկումների և տրամաչափարկումների իրականացման միջակայքերի վերաբերյալ սեմինարի: Նույն տարվա հունիս ամսին նշված փորձարկման լաբորատորիայի ներկայացուցիչները մասնակցել են հավատարմագրման ոլորտին առնչվող իրավական ակտերի կիրառման վերաբերյալ հանդիպմանը: 2017 թվականի հունիս ամսին Վասպուր Հովհաննիսյանը և Նունե Անդրեասյանը մասնակցել են «ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտով սահմանված տեխնիկական պահանջներ» թեմայով որակավորման դասընթացին, և ստացել մասնակցությունը հավաստող վկայագրեր: 2017 թվականի հոկտեմբերի 05-ին տեղի է ունեցել որակավորման գործընթաց, որին մասնակցել են սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի փորձագետ Նունե Անդրեասյանը և Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի փորձագետ (ձգաբանական փորձարկման լաբորատորիայի Չափման միջոցների հետևելիության անորոշության գնահատման,

անորոշության բյուջեի հաշվարկի պատասխանատու) Աննա Թովմայանը և համապատասխան քննություններ հանձնելուց հետո ստացել մասնագետի որակավորման վկայականներ՝ որպես համապատասխան չափումների ուղղություններով չափման միջոցների (սարքավորումների) ներքին տրամաչափարկում (ստուգում) իրականացնող մասնագետներ:

Վերապատրաստման դասընթացների և սեմինարների մասնակցությունն իրականացվել է նաև 2018 թվականին, մասնավորապես՝ 2018 թվականի մայիս ամսին Կազմակերպության ձգաբանական փորձարկման լաբորատորիայի փորձագետ Արամ Միրեկանյանը մասնակցել է «Համապատասխանության գնահատում, ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտի հիմնական պահանջներ» թեմայով դասընթացին և ստացել մասնակցությունը հավաստող վկայագիր: 2018 թվականի նոյեմբեր ամսին Կազմակերպության որակի ապահովման բաժնի պետ Էլմիրա Նալբանդյանը և պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ, ՆԱ խմբի ղեկավար Դավիթ Մելքումյանը մասնակցել են «Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» ԻՍՕ 9001:2015 ընդհանուր դասընթացին և ստացել վկայականներ:

Վերապատրաստման դասընթացների և սեմինարների մասնակցությունն նախատեսվում է նաև 2019-2020 թվականին՝ ըստ Կազմակերպության ուսուցման տարեկան պլանի՝ հաշվի առնելով ԻՍՕ 9001 և ԻՍՕ 17025 ստանդարտների վերջին փոփոխությունները՝ հաստատված նոր խմբագրություններով (ՀՍ ԻՍՕ 9001-2016 և ՀՍ ԻՍՕ 17025-2015 ստանդարտներ), որոնց ներդրման և ՈԿՀ համապատասխանության համար սահմանվել է անցումային ժամանակաշրջան:

Կազմակերպությունում փորձագիտական հետազոտությունների արժանահավատությունը բարձրացնելու նպատակով 2018 թվականին կրկին կնքվել է պայմանագիր «Չափագիտություն ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ Կազմակերպության ստորաբաժանումների չափման միջոցների և սարք-սարքավորումների ստուգաչափման ամենամյա աշխատանքների իրականացման նպատակով, որի արդյունքում վերջիններս մշտապես գտնվում են սարքին և ստուգաչափված վիճակում՝ ապահովված համապատասխան ստուգաչափման մասին վկայագրերով: 2019 թվականին նույնպես շարունակվելու է տարիների ընթացքում ձևավորված համագործակցությունը «Չափագիտություն ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ:

Կազմակերպության որակի ապահովման բաժինը 2018-2019 թվականներին իրականացրել է և 2020թ.-ին նույնպես շարունակելու է իրականացնել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում փորձագիտական բաժինների համապատասխան ոլորտներին ստանդարտներով ապահովման գործընթացը: 2018 թվականների ընթացքում վերջինիս կողմից Կազմակերպության համապատասխան ստորաբաժանումներին՝ էլնելով իրականացվող փորձաքննությունների կարիքներից, տրամադրվել և/կամ տրամադրվելու են թվով 20 (տարեկան կտրվածքով) միջազգային, միջպետական և հանրապետական ստանդարտներ, ինչպես նաև Կազմակերպությանն են տրամադրվում Հայաստանի ստանդարտների ամենամյա կատալոգը, Ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուները, նոր ստանդարտների վերաբերյալ ամենամյա տեղեկատվական թերթիկները, ինչպես նաև ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառներում ցանկացած

խորհրդատվություն, ինչպիսիք կատարվում են յուրաքանչյուր տարի: Տվյալ համագործակցությունը կրում է շարունակական բնույթ և իրագործվելու է նաև 2020 թվականի ընթացքում:

Հանդիսանալով Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) լիիրավ անդամ դեռևս 2011թ-ից՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել նշված ցանցի աշխատանքներին: Կարևոր է նշել, որ 2020թ. ընթացքում շարունակվելու են միջազգային պրակտիկայում ընդունված փորձագիտական մեթոդների և մեթոդիկաների ձեռքբերման և դրանց ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչը մեծապես կնպաստի իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և արդյունքների հավաստիության բարձրացմանը: Որպես օրինակ ստորև ներկայացված են 2018 թվականի ընթացքում «Փորձագիտական աշխատանքային խմբեր»-ում (FWG) կազմակերպության մի քանի փորձագիտական բաժինների կատարած աշխատանքները՝

- 2018թ-ին Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) «Փորձագիտական աշխատանքային խմբեր»-ի աշխատանքների շրջանակներում պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժինը շարունակել է մասնակցություն ունենալ ինչպես «Հրդեհների ու պայթյունների հետաքննության» աշխատանքային խմբի (FEIWG), այնպես էլ «Պայթուցիկ նյութերի» աշխատանքային խմբի (Պայթյունների հետազոտության միջազգային դատափորձագիտական ցանցի՝ FINEX) կողմից իրականացվող միջոցառումներին: Մասնավորապես՝ հայտ է ներկայացվել և դրական գնահատական է ստացվել Հրդեհների ու պայթյունների հետաքննության աշխատանքային խմբի (FEIWG) Հարուցիչների ենթահանձնաժողովի կողմից կազմակերպվող միջլաբորատոր հետազոտությունների վերաբերյալ (CE-17 - Collaborative Exercise of the Subcommittee Accelerants), իսկ 2018թ-ի փետրվար ամսին «Պայթուցիկ նյութերի» աշխատանքային խմբից ստացվել են համապատասխան նմուշներ, որոնց հետազոտության արդյունքները վերադարձվել են 2018թ-ի մայիս ամսին: Արդյունքներն ամփոփվել են Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) «Պայթուցիկ նյութերի» աշխատանքային խմբի տարեկան հանդիպման ժամանակ և ստացվել է դրական գնահատական:

- 2018թ-ի մայիսի ամսից Կազմակերպության դատաբժշկական փորձաքննությունների բաժինը՝ միակը Հայաստանի Հանրապետությունից, դարձել է ENFSI-ի «ԴՆԹ փորձագիտական աշխատանքային խմբի» (FWG) անդամ, որի շրջանակներում էլեկտրոնային նամակագրություն միջոցով իրականացվել են քննարկումներ ԴՆԹ փորձագիտական լաբորատորիաներում իրականացվող աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև Կազմակերպության դատաբժշկական փորձաքննությունների բաժինը մասնակցել է աշխատանքային խմբի կողմից կազմված հարցմանը լաբորատորիայում աշխատանքների վարման և ընթացակարգերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում դատաբժշկական փորձաքննությունների բաժինը մասնակցել է նաև «ԴՆԹ փորձագիտական աշխատանքային խմբի» (FWG) կողմից ուղարկված ևս մեկ հարցման, որը վերաբերում էր հետազոտությունից հետո ԴՆԹ նմուշի ոչնչացման տեխնիկական և իրավական ընթացակարգերին: Աշխատանքներ են իրականացվելու 2019-2020 թվականներին ընթացքում ԴՆԹ նույնականացման միջազգային չափանիշներին համապատասխան լաբորատորիայի ձևավորման և փորձաքննությունների իրականացման համար:

- 2018թ-ի ընթացքում ֆոտոտեխնիկական, դիմանկարային, տեսա- և աուդիոձայնագրական փորձաքննությունների բաժինը շարունակել է մասնակցությունը՝ «Թվային պատկերում» աշխատանքային խմբի կողմից կատարվող աշխատանքներին՝

իրականացնելով տեղեկատվական նյութերի փոխանակում, ինչպես նաև բաժնի կողմից փորձագիտական արժանահավատ հետազոտություններ իրականացնելու նպատակով «Թվային պատկերում» աշխատանքային խմբին հարցում է ուղարկել մեկ տեսախցիկի օգնությամբ տեսաձայնագրություններում պատկերված անձանց դիմապատկերի նույնականացման վերաբերյալ: Հարցմանը ստացվել է պատասխան, որ ներկայումս պատկերված անձանց դիմապատկերի նույնականացման հավանականությունը ցածր է և ներկայումս մշակվում է մեթոդ մեկից ավելի տեսախցիկների միջոցով անձանց դիմապատկերի նույնականացման իրականացնելու ուղղությամբ: Այս մեթոդի մշակման նպատակով «Թվային պատկերում» աշխատանքային խմբի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն 2019-2020 թվականներին կատարվող աշխատանքներին ներգրավել նաև «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ֆոտոտեխնիկական, դիմանկարային, տեսա- և աուդիոձայնագրական փորձաքննությունների բաժինը:

MP2018 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համապատասխան նամակագրության միջոցով Կազմակերպության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները նամակ-դիմում են ներկայացրել մասնակցելու ENFSI-ի 4 աշխատանքային խմբերի կողմից լավագույն փորձի ձեռնարկի մշակմանն ուղղված աշխատանքներին, մասնավորապես՝ դատափորձագիտական խոսքի և աուդիո ձայնագրությունների վերլուծության, կենդանական, բուսական և հողային հետքերի, դեպքի վայրի և ԴՆԹ աշխատանքային խմբերի հետ:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ, նույնիսկ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի մասնագետների անմիջական մասնակցության հնարավորությունների չընձեռման դեպքում, միջազգային գործընկեր կառույցների մասնագետների ներգրավմամբ ENFSI-ի նշված աշխատանքային խմբերի կողմից մշակվող Լավագույն փորձի ձեռնարկները կարևոր հիմք են հանդիսանալու Կազմակերպությունում այդ ուղղությունների զարգացման ապահովման հարցում:

Կարևոր է նաև արձանագրել, հաշվետու ժամանակահատվածում համագործակցության կապեր են հաստատվել և նաև շարունակվել են ամրապնդվել արդեն իսկ ձեռքբերված համագործակցության կապերը ԱՊՀ և Եվրոպական մի շարք զարգացած երկրների դատափորձագիտական կառույցների, մասնավորապես՝ Էստոնիայի դատափորձագիտական ինստիտուտի, Պրահայի Կրիմինալիստիկայի ինստիտուտի, Բրատիսլավայի դատափորձագիտական ինստիտուտի, Հունաստանի ոստիկանության դատափորձագիտական վարչության, Լիտվայի Հանրապետության արդարադատության նախարարության դատափորձագիտական կենտրոնի, Լատվիայի Հանրապետության պետական դատափորձագիտական բյուրոյի, Լատվիայի Հանրապետության ոստիկանության դատափորձագիտական ծառայության, Ռումինիայի արդարադատության նախարարության ազգային դատափորձագիտական ինստիտուտի, Պորտուգալիայի ոստիկանության դատափորձագիտական լաբորատորիայի, Իսպանիայի ներքին գործերի նախարարության գլխավոր ոստիկանության, Գերմանիայի դաշնային քրեական ոստիկանության գրասենյակի դատափորձագիտական ինստիտուտի, Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքի դատափորձագիտական ինստիտուտի, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության դատափորձագիտական կենտրոնի, Ուկրաինայի արդարադատության նախարարության պրոֆեսոր Ն.Ս.Բոկարիուսի անվան Խարկովի դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտի, Ուկրաինայի արդարադատության նախարարության Կիևի դատական փորձագիտության գիտահետազոտական ինստիտուտի, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատափորձագիտական կենտրոնի, Բելառուսիայի

Հանրապետության դատական փորձաքննությունների պետական կոմիտե, Մոլդովայի Հանրապետության ազգային դատափորձագիտական ինստիտուտի, Մոսկվայի շրջանի դատաբժշկական փորձաքննությունների բյուրոյի, Ուկրաինայի դատական փորձաքննությունների և փորձագիտական հետազոտությունների կենտրոնի, Լեհաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատահետազոտական ինստիտուտի, ինչպես նաև Ուզբեկստանի արդարադատության նախարարության Խ.Սուլեյմանովի անվան դատափորձագիտական հանրապետական կենտրոնի ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով ծանոթանալ միջազգային գործընկեր կառույցների նորագույն տեխնոլոգիաներին, փորձագիտական ընթացակարգերին, տեղեկատվական բազաներին, ինչպես նաև ձևավորվել են գործնական կապեր միջազգային տարբեր դրամաշնորհային համատեղ ծրագրեր իրականացնելու, փորձի փոխանակման, ինչպես նաև գիտագործնական փոխգործակցության ծավալման առումով:

Բացի այդ, առաջին անգամ Կազմակերպության գործունեության ընթացքում, ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի թմրանյութերի, հոգեմետ և թունավոր նյութերի փորձաքննությունների բաժանմունքի պետը ընդգրկվել է Դատափորձագիտական Ինստիտուտների Եվրոպական Ցանցի (ENFSI) «Թմրամիջոցներ» աշխատանքային խմբի կողմից ստեղծված լավագույն փորձի ձեռնարկի ենթահանձնաժողովի (Best Practice Manuel (BPM) Subcommittee) կազմում և ս.թ. նոյեմբերի 01-ից 02-ը մասնակցել է վերջինիս անդրանիկ աշխատանքային հանդիպմանը (ք. Կոպենհագեն, Դանիա):

- 2017-2018թթ. շարունակվել է ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի ակտիվ համագործակցությունը «Ներկեր և ապակիներ» աշխատանքային խմբի հետ: Համագործակցության շրջանակներում ակտիվ էլեկտրոնային նամակագրության միջոցով ձեռք են բերվել մի շարք տեղեկատվական նյութեր՝ կապված «Ներկեր և ապակիներ» աշխատանքային խմբի գործունեության հետ, ինչպես նաև Կազմակերպության ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի փորձագետ Ա.Գալստյանը 2018թ. նոյեմբերի 08-ին մասնակցել է Գերմանիայի Վիսբադեն քաղաքի քրեագիտատեխնիկական ինստիտուտի (BKA, Bundeskriminalamt Kriminaltechnisches Institut) կողմից կազմակերպված «Մեկ օր - մեկ թեմա» սեմինարին (One Day One Topic Seminar (OOS)), որը հնարավորություն է տվել ստեղծել համագործակցության նոր կապեր եվրոպական առաջատար գործընկեր կառույցների հետ:

- Դատափորձագիտական Ինստիտուտների Եվրոպական Ցանցի (ENFSI) հետ համագործակցության շրջանակներում Կազմակերպությունն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել (ENFSI Action Plan) 2017-2018 Գործողությունների Պլանի մշակման գործընթացին և տվել իր դրական քվեն:

Կարևոր է փաստել, որ 2017-2018 Գործողությունների Պլանը մշակվել է Դատափորձագիտական Ինստիտուտների Եվրոպական Ցանցի կառավարման խորհրդի կողմից՝ «Հետազոտությունների և զարգացման հարցերի» (R&D) և «Որակի ու իրազեկության» (QCC) մշտական հանձնաժողովների հետ սերտ համագործակցության արդյունքում և հիմնված է ENFSI 2015-2020-ի Ռազմավարական Ծրագրի վրա: Վերջինս

բաղկացած է 3 գլխավոր թեմաներից, իսկ Գործողությունների Ծրագրի նպատակն է իրականացնել այդ ծրագիրը մի շարք գործողությունների միջոցով: Գլխավոր թեմաներն են՝

1) օժանդակել Եվրոպական դատափորձագիտական ոլորտ (EFSA) 2020-ի ստեղծմանը Գործողությունների Պլանի իրականացման միջոցով, որի հետ կապված ENFSI-ին տրվել է համակարգողի դեր և իրականացնելու հետևյալ գործողությունները՝ լավագույն փորձի ձեռնարկների (Best Practice Manuel (BPM)) մշակում դատափորձագիտական ուղղությունների համար, խթանում դատափորձագիտության տվյալների բազաների փոխանակմանը, օրինակ՝ ձգաբանական, պայթյունատեխնիկական և թմրամիջոցների ոլորտներում, որակավորման ստուգման թեստերի և համագործակցային վարժությունների կազմակերպում դատափորձագիտական ուղղությունների համար,

2) որպես ռեսուրս դատափորձագիտական համայնքի աջակցման նպատակով՝ ամրապնդել ENFSI կազմակերպությունների կարողությունները, որի հետ կապված պետք է իրականացվեն համապատասխան այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ENFSI անդամներին խրախուսումը՝ վերը նշված գործառույթներին առավել ներգրավված դառնալու համար: ENFSI համայնքի պահանջներին համապատասխան շարունակել և զարգացնել Դատափորձագիտական կառավարման ուսուցումները, ներքին և արտաքին հաղորդակցությունների առավել տարածումը և թափանցիկության ապահովումը, ENFSI անդամներին խրախուսումը՝ մասնակցելու EU ֆինանսավորող ծրագրերին, ֆինանսական ծրագրերի ներդաշնակության և Աշխատանքային խմբերի համար ENFSI հաշիվների օգտագործման ավարտը,

3) համագործակցել շահագրգիռ կողմերի և գործընկերների հետ, որի շրջանակներում, օրինակ՝ ENFSI կատեղծի Խորհրդատվական Կոմիտե՝ բաղկացած ENFSI Խորհրդից, Եվրոպական Հանձնաժողովի ներկայացուցիչներից և ԵՄ գործակալություններից (օրինակ՝ Europol-ի, Eurojust-ի, CEPOL-ի, and EJTN-ի ներկայացուցիչներից): Խորհրդատվական Կոմիտեի նպատակն է բարելավել ENFSI ընկերակցության արժանահավատությունը դրսում և քննարկել ռազմավարական հարցեր:

Կարևոր է նաև նշել, որ Դատափորձագիտական Ինստիտուտների Եվրոպական Ցանցի (ENFSI) հետ համագործակցության շրջանակներում ձեռք բերված թվով 10 Լավագույն փորձի ձեռնարկները (Best Practice Manuals) ուսումնասիրվել են և համապատասխան հետազոտական աշխատանքներ են իրականացվել, նպատակ ունենալով առաջատար եվրոպական դատափորձագիտական ստանդարտները և փորձը ներդնել Հայաստանում և առաջին հերթին Փորձաքննությունների ազգային բյուրոյի փորձագիտական հետազոտությունների բնագավառում:

Որպես օրինակ կարելի է նշել ձգաբանական փորձաքննությունների բաժնի կողմից իրականացված «Հրագենից կրակոցի ընթացքում թողնված նստվածքի վերլուծության վերաբերյալ» լավագույն փորձի ձեռնարկի ուսումնասիրությունները: «Հրագենից կրակոցի ընթացքում թողնված նստվածքի վերլուծության վերաբերյալ» Լավագույն փորձի ձեռնարկի ուսումնասիրության աշխատանքների արդյունքում պարզվել է, որ

հնարավոր է կատարել կրակոցի հետքերի հետազոտություններ GSR անալիզի միջոցով ինչպես առարկաների, հագուստների, այնպես էլ մարդու մարմնի կամ դրա մարմնամասերի հետազոտության ժամանակ, որն իր հերթին հնարավորություն է տալիս որոշել կրակոցի հեռավորությունը: Վերը նշված մեթոդի կիրառման ժամանակ օգտագործվում են գործի հանգամանքներում բերված տվյալները կամ դեպքի վայրից և/կամ մարմնից հանված գնդակների բեկորների նյութերը: Համաձայն Լավագույն փորձի ձեռնարկի դրույթների՝ գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, այն բոլոր խոչնդոտները, որոնք կարող են ի հայտ գալ հետազոտության ընթացքում (օրինակ՝ արյունով առատ պատված կտորի ընդհանուր աղտոտվածությամբ ստուգիչ դրոշմ): Տվյալ ձեռնարկի ամփոփման և իրազեկման համար ձգաբանական փորձաքննությունների բաժնում անց են կացվել գիտագործնական սեմինարներ՝ նպատակ ունենալով այն կիրառելի դարձնել Կազմակերպության փորձագիտական աշխատանքների ընթացքում:

Վերը նշված աշխատանքային խմբերի հետ համագործակցության շրջանակներում 2017-2018թթ-ին (01.06.2018թ-ի դրությամբ) Կազմակերպության աշխատակիցները մասնակցել են Գերմանիայի Վիսբադեն քաղաքում կայացած «Ներկեր և ապակիներ» աշխատանքային խմբի կողմից կազմակերպված «Մեկ օր մեկ թեմա» վերտառությամբ սեմինարին (One Day One Topic Seminar (OOS)), Դատափորձագիտական Ինստիտուտների Եվրոպական Ցանցի (ENFSI) «Թմրամիջոցներ» աշխատանքային խմբի կողմից ստեղծված լավագույն փորձի ձեռնարկի ենթահանձնաժողովի (Best Practice Manual (BPM) Subcommittee) առաջին աշխատանքային հանդիպմանը, որը կայացել է Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում և Հունգարիայի դատափորձագիտական ինստիտուտի կողմից կազմակերպվող Դատափորձագիտական Ինստիտուտների Եվրոպական ցանցի՝ ENFSI-ի 30-րդ տարեկան համաժողովին, որը կայացել է Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում: Համագործակցության ընթացքում կարևոր է նաև նշել, որ «Monopoly 2012» ծրագրի շրջանակներում Կազմակերպությունում սկսվել են արդեն Եվրոմիության փորձագիտական բնագավառում ներդրված արդի մեթոդական ձեռնարկների (Best Practice Manuel) վերամշակման և տեղայնացման գործնական աշխատանքները: 2019թ.-ի ընթացքում նախատեսվում է շարունակել միջազգային պրակտիկայում ընդունված փորձագիտական մեթոդների և մեթոդիկաների ձեռքբերման և դրանց ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչը մեծապես կնպաստի իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և հավաստիության բարձրացմանը:

Վերոնշյալ բոլոր կառույցների հետ համագործակցությունը շարունակվելու է նաև 2020թ.-ի ընթացքում:

Փորձաքննությունների իրականացման ապահովմանն ուղղված գիտագործնական բնույթի աշխատանքների շրջանակներում կարևոր է նաև նշել, որ Փորձաքննությունների ազգային բյուրոն ՀՀ-ում գործող շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների և ճապոնական առաջատար բազային ընկերության Շրջակա միջավայրի վերահսկողության կենտրոնի (Environmental Control Center Co) հետ անց է կացրել կլոր սեղան: Կենտրոնը մասնագիտացված է իրականացնելու հողի, ջրի, օդային ավազանի և այլնի մշտադիտարկումներ և հետազոտություններ:

Կլոր սեղանը նվիրված է եղել բնապահպանական բնագավառի արդի հիմնախնդիրներին, մասնավորապես՝ սնդիկի մասին Մինամատայի կոնվենցիային, Ճապոնիայի բոլոր պրեֆեկտուրաներում ռադիոակտիվ նյութերի առկայությանը «Ֆուկուսիմա» ատոմային էլեկտրակայանի վթարից հետո և այլն: Ձեռք բերված համաձայնության համաձայն մշակվել և ձևավորվել է երկու կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմատիկ նախագիծ երկու թեմաներով՝ «Ճառագայթային մոնիթորինգի գործնական համակարգը, ճառագայթման անվտանգությունը և վերահսկողության ժամանակակից պահանջները» և «Լեռնահանքային ձեռնարկությունների և պոչամբարների շրջակայքում՝ հողերում, ջրերում ծանր մետաղների ուսումնասիրությունը», որոնք նախատեսվում է իրականացնել 2019 թվականին:

Կարևորագույն գիտագործնական բնույթի աշխատանքների շրջանակներում Կազմակերպության և Մադրիդի Տոքսիկոլոգիական (թունաբանական) և դատական փորձագիտության ազգային ինստիտուտի միջև անցկացվել է առցանց սեմինար, որի ընթացքում քննարկվել են հիմնական նորագույն մեթոդիկաները կապված մեզի, մազի և արյան մեջ թմրամիջոցների, հոգեմետ դեղամիջոցների, դեղերի հայտնաբերման համար կիրառվող նրբաշերտ քրոմատոգրաֆիական մեթոդները, մազերի մեջ էթիլ գլյուկուրոնիդ և ճարպային թթուների էթիլ էսթեր բիոմարկերների հայտնաբերման հետազոտությունները, թմրամիջոցների, հոգեմետ դեղամիջոցների, դեղերի օտագործման ժամանակ ձեռքի եղունգների հետազոտությունները և տեխնոլոգիաները: Քննարկված հարցերի շուրջ ձեռք է բերվել պայմանավորվածություն 2018-2019 թվականների ընթացքում տեղեկատվական և գիտամեթոդական փորձի փոխանակման վերաբերյալ, ինչպես նաև նախատեսվել է իրականացնել կլոր սեղաններ սինթետիկ կանաքիտիդների և մեզի մեջ թմրամիջոցների, հոգեմետ դեղամիջոցների, դեղերի հայտնաբերման վալիդացված մեթոդների, նորագույն մեթոդիկաների, տեխնոլոգիաների և գիտամեթոդական փորձի փոխանակման ուղղությամբ:

Միջազգային համագործակցության շրջանակներում կարևոր է նշել, որ Բրատիսլավայի դատափորձագիտական ինստիտուտի հետ 2018թ-ին ձեռք է բերվել պայմանավորվածություն փորձագետների միջև հետագա համագործակցության կապերի հաստատման և խորացման ուղղությամբ, որի շրջանակներում հնարավորություն կընձեռվի նաև Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես՝ Փորձաքննությունների ազգային բյուրոյում, ներդնել մեր հանրապետությունում դեռևս չիրականացվող պոլիգրաֆի կիրառմամբ դատահոգեֆիզիոլոգիական հետազոտության մեթոդը:

Ակնհայտ է, որ գիտագործնական աշխատանքների տեսականու ընդլայնումը միանշանակ նպաստում է փորձագիտական գործունեության պատշաճ որակի ապահովմանը, տեխնոլոգիական մակարդակի բարելավմանն ու պահպանմանը: Այն կրում է դինամիկ, շարունակական բնույթ և շարունակվելու է 2020թ-ի ընթացքում:

Հայ-ճապոնական համագործակցությունը կանոնավոր պարբերական դարձնելու նպատակով Փորձաքննությունների ազգային բյուրոյում թարգմանվել են զգալի քանակությամբ գրականություն և ինֆորմացիոն բնույթի նյութեր, որոնք վերլուծվել և

համադրվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրության հետ, որի արդյունքում Կազմակերպությունում 2015 թվականից սկսած տեղի են ունենում տեսակոնֆերանսներ, որոնց մասնակցում են նաև ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ քննչական կոմիտեի և այլ կառույցների ներկայացուցիչներ:

Նախատեսվում է 2020-2022 թվականներին Կազմակերպության սարք-սարքավորումների ցանկը համալրել ևս մի քանի արդի սարք-սարքավորումներով, այդ թվում՝ նոր ջրածնային գեներատորով, բջջային հեռախոսների կրիմինալիստիկական համակարգի կարգավորման սարքով, ինչպես նաև նոր ծրագրային ապահովման համակարգերով, նոր թարմեցված էլեկտրոնային գրադարաններով, պոլիգրաֆով և այլն:

Պետք է նշել, որ Կազմակերպության աշխատակիցները սկսած 2014-2017թթ. մասնակցում են Ամերիկյան քրեագիտական կենտրոնների տնօրենների միություն (ASCLD) կողմից կազմակերպվող առցանց սեմինարներին, որոնք մասնավորապես նվիրված էին ձգաբանություն, տոքսիկոլոգիա, նյութեր, որոնք ենթակա են հսկողության, IT-տեխնոլոգիաներ, թաքցրած հետքեր և ԴՆԹ:

Այս առումով կարևոր է նշել, որ 2020-2022 թվականներին նախատեսվում է շարունակել ակտիվ մասնակցությունը Ամերիկյան քրեագիտական կենտրոնների տնօրենների միության (ASCLD) կողմից կազմակերպվող առցանց սեմինարներին, որը հնարավորություն է տալիս կիրառել ամերիկյան առաջավոր փորձը, մեթոդիկաները և տեխնոլոգիաները փորձագիտական գործունեության մեջ:

2020-2022 թվականների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային Կազմակերպությունում նախատեսվում է փորձագիտական նոր տեսակների և ենթատեսակների, հետազոտական մեթոդների և մեթոդիկաների ներդրում, գիտականորեն հիմնավորված նոր ուղղությունների մշակում և իրականացում, ինչպես նաև՝ կատարելագործել և զարգացնել նախորդ տարիներին ներդրված փորձագիտական տեսակների և ենթատեսակների հնարավորությունները, որոնք հիմնված են նորագույն տեխնոլոգիաների վրա, իրականացվում են արդյունավետ /օպտիմալ/ փորձագիտական մեթոդիկաների և ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարք-սարքավորումների կիրառմամբ: Կազմակերպությունը նաև ծրագրում է տարեցտարի շարունակել բարձրացնել համագործակցության մակարդակը միջազգային մի շարք հեղինակավոր գիտական և փորձագիտական կառույցների հետ՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ կազմակերպել գիտական աշխատանքների իրականացումը կազմակերպությունում, ինչպես նաև՝ առավելագույնս ուսումնասիրել փորձագիտական բնագավառի համար կարևորագույն նշանակություն ունեցող գիտության այս կամ այն ոլորտի միջազգային առաջավոր փորձը՝ հետազայում այն Կազմակերպության մասնագիտական ստորաբաժանումներում ներդնելու և կիրառելու նպատակով:

2020-2022 թվականներին Կազմակերպությունը պլանավորում է ձեռնամուխ լինել փորձագիտական օվյալների բազաների ընդլայնման և նորերի կազմավորման ըստ առանձին գիտական ուղղությունների՝ հիմնված ժամանակակից թվային

տեխնոլոգիաների վրա, զարգացնել գիտական ոլորտները, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային ստանդարտներին, մասնավորապես նախատեսվում է՝

- մշակել և տեղայնացնել «LINTAB» LTM06-E մոդելի սարքից և TSAP-Win համակարգչային ծրագրից օգտվելու ընթացակարգը և սկսել նոր գործընթաց դատափորձագիտական բնագավառում դենդրոխրոնոլոգիական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման ուղղությամբ,

- մշակել և տեղայնացնել «PC Crash» համակարգչային ծրագրի ընթացակարգը և սկսել նոր գործընթաց դատափորձագիտական բնագավառում ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների (ՃՏՊ) մոդելավորման բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման ուղղությամբ,

- վերլուծել և արդիականացնել Կազմակերպությունում գործող բոլոր ստորաբաժանումներին վերաբերող համապատասխան հրահանգները և ընթացակարգերը,

- իրականացնել գործիքային եղանակներով կենսաբանական օբյեկտների /մեզ, արյուն/ հետազոտություններ՝ տոքսիկոլոգիական փորձաքննություններում առկա մեթոդիկաների կատարելագործման, ինչպես նաև նոր գործիքային մեթոդների ներդրման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է նաև վերանայել և նորացնել բաժանմունքում գործող հետազոտական մեթոդիկաների կիրառման ընթացակարգերը,

- նախատեսվում է արդեն իսկ շահագործվող ժամանակակից «55 AA» մոդելի բոցային և «200 AA» մոդելի գրաֆիտային ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերով իրականացնել աշխատանքներ նոր մեթոդների մշակման ուղղությամբ, մասնավորապես՝ նմուշառման, հողերում, ջրերում և այլ օբյեկտներում ծանր մետաղների քանակական հետազոտությունների իրականացման նպատակով,

- իրականացվելու են աշխատանքներ նկարների ստեղծման ժամկետների հավաստման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների շտեմարանների համալրում ուղղությամբ, ինչպես նաև շարունակվելու են Կազմակերպությունում իրականացվող մշակութային արժեքների փորձաքննությունների ընթացքում ստացվող տվյալների և մասնագիտական գրականությունում առկա տեղեկատվության համադրման, հետազոտման և վերլուծական աշխատանքները:

- նախատեսվում է ձեռք բերել միջազգային կառույցներում առկա մեթոդիկաներ և ստեղծել հնագիտական-պատմական տվյալների շտեմարան կապված գերեզմանաշտերի, եկեղեցիների և այլ կրոնական կառույցների, հնագիտական առարկաների կամ դրանց բեկորների վերաբերյալ,

- հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Կազմակերպությունում առկա է ևս մեկ նոր ձեռք բերված «NITON XL3t» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորը ունի երկու հավելյալ կարևոր ռեժիմներ, 2018թ. շարունակվել են արդեն իսկ մշակված և հաստատված «Niton XL3T» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով

աշխատելու մեթոդի և ընթացակարգի հիման վրա մետաղների և դրանց համաձուլվածքների, այդ թվում՝ մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի հանքային բաղադրակազմերի փորձագիտական հետազոտությունները: Ներկայումս ընթանում են մետաղական շերտերի՝ ծածկույթների, ներկանյութերի, կենցաղային, այդ թվում՝ կերամիկական առարկաների մեջ ծանր մետաղների հետազոտության, ինչպես նաև նմուշապատրաստման օպտիմալ մեթոդների մշակման և գործող մեթոդի ու ընթացակարգի լրամշակման հետ կապված աշխատանքներ, որոնք ունեն շարունակական բնույթ:

- 2020-2022 թվականներին շարունակական բնույթ են կրելու դեռևս նախորդ տարիներին սկսած մի շարք այլ փորձագիտական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքները, այդ թվում՝ փամփուշտների և պարկուճների, ներկանյութերի, սառը գենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի, օծանելիքների, օրգանական լուծիչների, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, թղթադրամների, գնդիկավոր գրելագործիքների, պայթուցիկ նյութերի և դրանց պայթյունի արգասիքների, մասս-սպեկտրոմետրի, «HP-6890» մոդելի գազ-քրոմատագրման սարքի և «IR Prestige-21» տիպի Ֆուրյե ձևափոխմամբ ինֆրակարմիր սպեկտրոմետրի կիրառմամբ և այլն:

2020-2022 թվականներին Կազմակերպությունում նախատեսվում է սկսել նոր արդիական ուղղություններով որոնողական աշխատանքներ, որոնք դեռևս Հայաստանի Հանրապետության փորձագիտության բնագավառում չեն իրականացվել, ինչը շատ կարևոր է ժամանակին արձագանքելու այսօրվա մարտահրավերներին, ինչպես նաև ներդնելու ողջ ներուժը փորձագիտության բնագավառում ընդլայնելու փորձագիտական տեսակները և ենթատեսակները, մասնավորապես՝

- Փորձագիտական տվյալների բազաների կազմավորում ըստ առանձին գիտական ուղղությունների՝ հիմնված ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա,
- Հայաստանի Հանրապետությունում զարգացնել, ըստ առանձին գիտական ոլորտների, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային ստանդարտներին,
- Քրեագիտական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների նոր, արդիական հեռանկարային ուղղությունների ձևավորում,
- Հայաստանի Հանրապետությունում դատափորձագիտական վիճակագրության համակարգի ձևավորում և ներդրում: Փորձագիտական բնույթի աշխատանքներում՝ արդյունքների վերլուծության և մշակման ընթացքում, հավանականության տեսության մեթոդների օգտագործում, այդ թվում՝ Բայեսյան օրինաչափությունների կիրառմամբ,
- Փաստաթղթերի ռեկվիզիտների հարաբերական վաղեմության որոշման քրեագիտական փորձաքննության տեսական և մեթոդաբանական հիմունքների կատարելագործում, նորագույն տեխնոլոգիաների և փորձագիտական մեթոդների ներդրում,
- Փորձագիտական բնույթի աշխատանքների (հետազոտություններ, տեխնիկական փորձարկումներ, վերլուծություններ և այլն) հնարավորությունների ընդլայնման և որակի բարձրացման նպատակով Փորձաքննությունների ազգային բյուրոյի միջազգային

հավատագրում՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 միջազգային ստանդարտների պահանջների,

- Փորձագիտություն բնագավառի աշխատանքներում հսկողության ուժեղացում, նորագույն հետազոտական, գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում, նորերի մշակում:

Վերոնշյալ հանգամանքները հանգեցնելու են ծախսատար՝ մասնավորապես նորագույն սարքավորումներով և ժամանակակից տեխնոլոգիաներով բյուրոյում իրականացվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը, ինչն իր հերթին կհանգեցնի Կազմակերպությանը նշանակվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը և քանակի աճին: Այդ առումով պետք է նաև նշել, որ, բնականաբար, նախատեսվում է ավելացնել նաև գործող բաժինների կարողությունները և կազմավորել որոշ նոր ստորաբաժանումներ:

Պետք է արձանագրել, որ մինչ օրս վերոնշյալ բոլոր գործընթացները հանգեցրել են Կազմակերպությունում իրականացվող գործառույթների, մասնավորապես փորձաքննությունների ընթացքում կատարվող հետազոտությունների, տեխնիկական փորձարկումների, գնահատումների, վերլուծությունների և դրանց արդյունքում կազմվող փորձագիտական եզրակացությունների նկատմամբ պատվիրատուների՝ քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների վստահության էապես բարձրացմանը, ինչպես նաև իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և արժանահավատության բարձրացմանը, ինչն իր հերթին նպաստել է նշանակվող դատական փորձաքննությունների քանակային աճին:

2017 թվականի ընթացքում Կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ դատաքիմիական /թունաբանական/ (2776 հատ), ապրանքագիտական (1092 հատ), նյութագիտական (1025 հատ), փաստաթղթաբանական (939 հատ), հետքաբանական (816 հատ), ձեռագրաբանական (727 հատ), դատաբժշկական (579 հատ), համակարգչատեխնիկական (506 հատ) փորձաքննությունների տեսակները:

2018 թվականի ընթացքում Կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ նյութագիտական (1987 հատ), ապրանքագիտական (1166 հատ), փաստաթղթաբանական (945 հատ), դատաքիմիական /թունաբանական/ (861 հատ), ձեռագրաբանական (802), կենսաբանական (606 հատ), հետքաբանական (575 հատ) փորձաքննությունների տեսակները:

Կազմակերպությունում կատարվող փորձաքննություններից գերակայող տեսականին հիմնականում պահպանվում է նաև 2019թ. առաջին եռամսյակի արդյունքներով:

Հիմք ընդունելով 2017-2019 թվականների ընթացքում կատարվող փորձաքննությունների տեսակների գերակայությունը կարելի է կանխատեսել, որ այն կրելու է շարունակական աճը պահպանող բնույթ նաև 2020-2022 թվականների համար:

Ելնելով վերոշարադրյալից, ստորև բերվում է հաշվարկ՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքի շրջանակներում մինչև տարեվերջ նշանակվող դատական փորձաքննությունների կատարումը ապահովելու առավել ճշգրիտ կանխատեսումներ իրականացնելու նպատակով:

Հ Ա Շ Վ Ա Ը Կ

Հաշվարկը կատարված է ընթացիկ տարվա՝ 2019 թվականի և 2018 թվականի ընթացքում պետական պատվերի շրջանակներում կատարված փորձաքննությունների քանակների համեմատական վերլուծությունների հիման վրա:

2018 և 2019 թվականների առաջին եռամսյակների և 2018 թվականի հաջորդող իննը ամիսների ընթացքում պետական պատվերի շրջանակներում փաստացի իրականացված դատական փորձաքննությունների քանակական արդյունքների վերլուծության հիման վրա 2019 թվականի համար կատարված կանխատեսում

Աղյուսակ N 2

Տարեթիվ	1-ին եռամսյակի կատարողականը (հատ)	2,3,4-րդ եռամսյակների կատարողականը (հատ)	տարվա կատարողականը (հատ)
2018 թվական	2276	7549	9825
2019 թվական	2372	7851 (7549 x 1.04) (կանխատեսում)	10223 (կանխատեսում)
2019/2018 համեմատ աճի գործակից	1.04	1.04	

Սույն հաշվարկը հիմնված է պետական պատվերի շրջանակներում 2018 թվականի և 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում փաստացի իրականացված դատական փորձաքննությունների քանակային ցուցանիշների համեմատական վերլուծության և փորձաքննությունների կատարման աճի միջինացված գործակցի վրա:

Տարեթիվ	2018-2019թթ. առաջին եռամսյակների կատարողականը /հատ /		2018թ. եռամսյակների միջև փաստացի կատարողականների համեմատական աճի միջին գործակիցը	2019թ առաջին եռամսյակի կատարողականի գործակիցը 2018թ առաջին եռամսյակի համեմատ	2018թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. մարտի 31-ը ժամանակահատվածում եռամսյակային կատարողականների աճի միջինացված գործակից	ապրիլից մինչև տարեվերջ կատարողականը (հատ)՝ 2018թ. փաստացին և 2019թ. կանխատեսումը		տարվա կտրվածքով կատարողականը /հատ/՝ 2018թ. փաստացին և 2019թ. կանխատեսումը
	Երեք ամսվա	միջին ամսական				9 ամսվա	միջին ամսական	
2018թ	2276	757	1,09 (2359/2276+ 2274/2359+ 2867/2274)/3	1,04 (2372/2276)	1,065	7549	839	9825
2019թ	2372	791			(1,09 + 1,04)/2	7579 (2372 x 1,065 x 3) /կանխատեսում/		9951 (2372 + 7579) /կանխատեսում/

2018 թվականի և 2019 թվականի ընթացքում պետական պատվերի շրջանակներում իրականացված դատական փորձաքննությունների քանակական արդյունքների վերլուծության հիման վրա 2019 թվականի համար կանխատեսումներ.

Աղյուսակ N 3-ից երևում է, որ 1,09 գործակիցը հանդիսանում է 2018 թվականի միմյանց հաջորդող եռամսյակների միջև փաստացի կատարողականների համեմատական աճի միջին գործակիցը: 2019թ.-ի ապրիլից մինչև տարեվերջ կատարողականների քանակն առավել ճշգրիտ կանխատեսելու համար միջինացվել են նաև վերոնշյալ երկու գործակիցները, իսկ դրա արդյունքում ստացված 1,065 գործակիցը հանդիսանում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը ժամանակահատվածում արձանագրված միմյանց հաջորդող եռամսյակների միջև աճի ցուցանիշների միջինացված գործակիցը (տես աղյուսակ N 4):

2019 թվականի 1-ին եռամսյակի փաստացի կատարողականի նկատմամբ կիրառելով վերոնշյալ միջինացված գործակիցը (1,065) ստացվում է ապրիլից մինչև տարեվերջ կանխատեսվող փորձաքննությունների քանակը, որը կազմում է 7579 հատ:

Հարկ է նշել, որ 2019թ-ի համար փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը սահմանվել է 560 դրամ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի, ինչպես նաև դրանից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N79-Ն որոշման և դրանց հիման վրա «Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2019թ-ի պետական պատվերի մասին» ՀՀ գլխավոր դատախազի 17.01.2019թ-ի թիվ 3 հրամանի:

Այսպիսով, վերոգրյալ իրավիճակային վերլուծությունից ելնելով, վերը նշված երկու աղյուսակներում տարբեր եղանակներով հաշվարկված և արտացոլված քանակների միջինացված ցուցանիշը ստացվում է՝ 7715 [(7851+7579):2] և հիմնավորվում է, որ 2019 թվականի ապրիլից մինչև տարեվերջ ընկած ժամանակահատվածում Կազմակերպությունում կանխատեսվում է իրականացնել 7715 դատական փորձաքննություններ (ըստ հետազոտելի օբյեկտների): 2019թ.-ի առաջին եռամսյակի

վերլուծությունը ցույց է տալիս, որ միջին ամսական փորձաքննությունների քանակը՝ ըստ կատարողականների, կազմում է շուրջ 791 (տես Աղյուսակ N3): Ելնելով որոշ տեսակներով նշանակվող դատական փորձաքննությունների ներկայումս նկատվող աճի միտումներից, ներկայումս վարույթում առկա փորձաքննությունների բարդ, համալիր, ժամանակատար և ծախսատար բնույթից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն վերջին տարիների վիճակագրական տվյալների յուրաքանչյուր տարվա վերջին եռամսյակում շուրջ 10%-ով ավելանում է նշանակվող փորձաքննությունների քանակը՝ կանխատեսվում է, որ նշված փորձաքննություններից (7579-ից) շուրջ 780-ի (ըստ հետազոտելի օբյեկտների) կատարումն ընթացիկ տարեվերջին կտեղափոխվի 2020 թվական, արդյունքում 2019 թվականի ապրիլի 1-ից մինչև տարեվերջ կիրականացվի շուրջ 6799 (7579-780) փորձաքննություններ (ըստ հետազոտելի օբյեկտների):

Նկատի ունենալով, որ տարբեր փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի գները տարբեր են՝ 6799 փորձաքննությունների կատարման ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը հաշվարկելու համար օգտվենք մեկ փորձաքննության կատարման ծառայության միջին գնից՝

$$Q_u = \frac{Q_{\phi}}{\Phi_{\phi}} \times \Phi_{u, \text{in}} \times U_{z\phi}$$

որտեղ՝

Q_u = 2019 թվականի ապրիլի 1-ից մինչև տարեվերջ փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտ գումարն է:

Q_{ϕ} = 83,709,4՝ մինչև 2019 թվականի ապրիլի 1-ը պետական պատվերի շրջանակներում կատարված փորձաքննությունների գինն է հազար դրամներով (տես աղյուսակ N 4):

Φ_{ϕ} = 2372՝ մինչև 2019 թվականի ապրիլի 1-ը պետական պատվերի շրջանակներում կատարված փորձաքննությունների քանակն է (տես աղյուսակ N 4):

$\Phi_{u, \text{in}}$ = 6799՝ 2019 թվականի ապրիլի 1-ից մինչև տարեվերջ ավարտվելիք փորձաքննությունների քանակն է:

$U_{z\phi}$ = 1.2՝ վիճակագրական տվյալներից բխող գործակից է, որը հաշվի է առնում 2019 թվականի ապրիլի 1-ից մինչև տարեվերջ ավարտվելիք փորձաքննությունների քանակը, որոնց իրականացման արդյունքում առաջադրված հարցերը պարզաբանում չեն ստանա:

Բանաձևում տեղադրելով համապատասխան արժեքները՝ ստացվում է

$$Q_u = \frac{83\,709,4}{2372} \times 6799 \times 1,2 = 287\,929,0 \text{ հազ.դրամ}$$

Այսպիսով, 2019 թվականի կտրվածքով մեր կանխատեսումները կկազմեն թվով 9171 (2372 + 6799) փորձաքննությունների կատարման ծառայություններ՝ գումարային արտահայտությամբ շուրջ 371 638,4 հազար դրամի չափով (83 709,4 + 287 929,0 = 371 638,4):

Գնահատելով վերոնշյալ վերլուծությամբ ստացված արդյունքներն ակնհայտ է դառնում, որ 2019 թվականի ընթացքում տարեկան կտրվածքով պետական պատվերի շրջանակներում հիմնավոր կանխատեսվում է թվով շուրջ 9171 դատական փորձաքննությունների իրականացում՝ գումարային արտահայտմամբ 371 638,4 հազար դրամի չափով, ինչը հաշվի առնելով 2019թվականին տեղադրված պետական պատվերի ծավալը, անհրաժեշտություն կառաջացնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման շուրջ 87 279,4 հազար դրամի չափով (371 638,4 – 284 359,0):

ՀՀ ԳԱԱ §Փորձաքննությունների ազգային բյուրոյի ՊՈԱԿ-ում
 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պետական պատվերի շրջանակներում
 իրականացված դատական փորձաքննությունները

N	Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Միավոր արժեքը /դրամ/	հունվար		փետրվար		մարտ		ընդամենը 2019թ առաջին եռամսյակ	
			թվական	գումար	հոլովով	գումար	հոլովով	գումար	հոլովով	գումար
1	Ձեռագրաբանական	25200	29	730.8	22	554.4	32	806.4	83	2091.6
2	Փաստաթղթաբանական	33600	174	5846.4	72	2419.2	103	3460.8	349	11726.4
3	Հեղինակային	25200								
4	Ֆոտոտեխնիկական	50400					1	50.4	1	50.4
5	Դիմանկարային	50400			1	50.4			1	50.4
6	Տեսաձայնագրառման և ատդիոձայնագրառման	67200	10	672.0	14	940.8	23	1545.6	47	3158.4
7	Հետքաբանական	25200	37	932.4	53	1335.6	69	1738.8	159	4006.8
8	Ձգաբանական	33600	62	2083.2	15	504.0	59	1982.4	136	4569.6
9	Պայթյունատեխնիկական	50400	3	151.2	13	655.2	1	50.4	17	856.8
10	Նյութագիտական	33600	355	11928.0	91	3057.6	127	4267.2	573	19252.8
11	Սննդային	33600		0.0	5	168.0	5	168	10	336.0
12	Կենսաբանական /հողագիտական/	33600	36	1209.6	68	2284.8	124	4166.4	228	7660.8
13	Հրդեհատեխնիկական	50400	19	957.6	26	1310.4	26	1310.4	71	3578.4
14	Շինարարատեխնիկական	33600	12	403.2	16	537.6	18	604.8	46	1545.6
15	ԾՏՊ հանգամանքների	16800	9	151.2	11	184.8	17	285.6	37	621.6
16	SU տեխնիկական վիճակի	50400	2	100.8	2	100.8	8	403.2	12	604.8
17	Տրանսպորտային հետքաբանական	50400	4	201.6	2	100.8	7	352.8	13	655.2
18	Տնտեսագիտական, հաշվապահական	100800	3	302.4					3	302.4
19	Ապրանքագիտական	16800	46	772.8	73	1226.4	100	1680	219	3679.2
20	Համակարգչատեխնիկական	84000	1	84.0	47	3948.0	5	420	53	4452.0
21	Մշակութային արժեքների	67200	6	403.2	3	201.6	10	672	19	1276.8
22	Ճարտարագիտատեխնիկական	84000	6	504.0	10	840.0	13	1092	29	2436.0
23	Լինգվիստիկական	85680		0.0		0.0	2	171.36	2	171.4
24	Հոգեբանական	85680	3	257.0	8	685.4	5	428.4	16	1370.9
25	Դատաբժշկական	69440	30	2083.2	32	2222.1	46	3194.24	108	7499.5
26	Դատաքիմիական/թունաբանական/	11760	20	235.2	49	576.2	66	776.16	135	1587.6
27	Դատագենետիկական (ԴՆԹ նույնականացման)	145600								
28	Օդորոլոգիական/այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի	33600								
29	Էկոլոգիական	33600	1	33.6	2	67.2	2	67.2	5	168.0
	Ընդամենը		577	30043.4	635	23971.3	869	29694.5	2372	83709.4

Այսպիսով, հիմք ընդունելով ներկայացված հաշվարկները, նախորդ տարիների և 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացված փորձագիտական ծառայությունների ընդլայնումը և 2018-2019 թվականների ընթացքում արդեն իսկ տեղ գտած առանձին ուղղություններով զգալի քանակական աճը, սույն հայտով 2020 թվականի համար պահանջվում է 390220,3 հազար դրամի չափով բյուջետային ֆինանսավորում թվով 9630 դատական փորձաքննությունների կատարման համար (տես Աղյուսակ 5), ինչը նախատեսում է 2019թ. համար տվյալ ծրագրով վերոնշյալ կանխատեսվող 371638,4 հազար դրամի համեմատ ընդամենը 5%-ի չափով աճ:

Պետք է նշել, որ Աղյուսակ 5-ում նշված փորձաքննությունները կատարվելու են ՀՀ օրենսդրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, այդ թվում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N79-Ն որոշմամբ սահմանված յուրաքանչյուր փորձաքննության տեսակի համար հաստատված փորձագիտական աշխատանքի նորմատիվային ժամաձախսերի և 2018թ-ից սահմանված 560 դրամ փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքի համաձայն:

Հաշվի առնելով Կազմակերպությանը նշանակվող հիմնական տեսակներով և ենթատեսակներով փորձաքննությունների աճի կայուն միտումը, հարկ է նշել, որ անգամ նույն՝ 2019թ-ի քանակային ցուցանիշների պահպանման դեպքում ֆինանսական միջոցների՝ կանխատեսվող 371 638,4 հազ. դրամի հատկացումը 2020թ.-ի համար թույլ կտա նաև բավարար կերպով կատարել 2020 թվականի ընթացքում Կազմակերպության առջև դրված խնդիրները:

Սույն ծրագրով 2020 թվականի համար նախատեսվող բյուջետային ֆինանսավորումը առաջարկվում է բաշխել ըստ եռամսյակների հավասար տոկոսաչափերով՝ յուրաքանչյուր եռամսյակում 25%-ի չափով:

2020 թվականի ընթացքում ՀՀ դատախազության միջոցով տեղադրվող պետական պատվերի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից ձեռք բերման համար նախատեսվող 9630 դատական (29 տեսակի) փորձաքննությունների նախահաշիվ.

Աղյուսակ N 5

	Փորձաքննության տեսակի նվաճումը	Փորձագիտական աշխատանքների նորմատիվային ժամաձախսը /ժամ/	Փորձագիտական աշխատանքների 1ժամվա արժեքը /դրամ/	Փորձաքննությունների միավորի գինը /դրամ/	Փորձաքննությունների նախատեսվող քանակը /հատ/	Ընդամենը /հազ.դրամ/
1	Ձեռագրաբանական	45	560	25200	731	18421.2
2	Փաստաթղթաբանական	60	560	33600	951	31953.6
3	Հեղինակային	45	560	25200	4	100.8
4	Ֆոտոտեխնիկական	90	560	50400	23	1159.2
5	Դիմանկարային	90	560	50400	44	2217.6
6	Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	120	560	67200	274	18412.8
7	Հետքաբանական	45	560	25200	615	15498.0
8	Ձգաբանական	60	560	33600	326	10953.6
9	Պայթյունատեխնիկական	90	560	50400	83	4183.2
10	Նյութագիտական	60	560	33600	1010	33936.0
11	Սննդային	60	560	33600	117	3931.2
12	Կենսաբանական /հողագիտական/	60	560	33600	512	17203.2
13	Հրդեհատեխնիկական	90	560	50400	283	14263.2
14	Շինարարատեխնիկական	60	560	33600	318	10684.8
15	ՃՏՊ հանգամանքների	30	560	16800	309	5191.2
16	ՏՄ տեխնիկական վիճակի	90	560	50400	45	2268.0
17	Տրանսպորտային հետքաբանական	90	560	50400	191	9626.4
18	Տնտեսագիտական, հաշվապահական	180	560	100800	242	24393.6
19	Ապրանքագիտական	30	560	16800	1016	17068.8
20	Համակարգչատեխնիկական	150	560	84000	623	52332.0
21	Մշակութային արժեքների	120	560	67200	135	9072.0
22	Ճարտարագիտատեխնիկական	150	560	84000	175	14700.0
23	Լինգվիստիկական	153	560	85680	20	1713.6
24	Հոգեբանական	153	560	85680	219	18763.9
25	Դատաբժշկական	124	560	69440	584	40553.0
26	Դատաբիմիական/թունաբանական/	21	560	11760	709	8337.8
27	Դատագենետիկական (ԴՆԹ նույնականացման)	260	560	145600	8	1164.8
28	Օդորոլոգիական/այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի	60	560	33600	4	134.4
29	Էկոլոգիական	60	560	33600	59	1982.4
	Ընդամենը				9630	390220.3

Համաձայն վերը նշված համեմատականների և կանխատեսումների անհրաժեշտ է պետական բյուջեի 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով 2020 թվականի համար նախատեսել 390 220,3 հազ. դրամ՝ հաշվի առնելով իրականացվող փորձագիտական ծառայությունների տեսականու (այդ թվում ենթատեսակների և տեխնոլոգիական ուղղությունների) տարեցտարի աստիճանաբար ընդլայնումը և հիմնական ուղղություններով որոշակի քանակային աճը, ինչպես նաև փորձաքննությունների պատշաճ որակով և ժամկետներում կատարման ապահովման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով ֆինանսավորվող ծրագրով համամասնորեն ավելացումներ են նախատեսված տնտեսագիտական դասակարգման համապատասխան հոդվածներով:

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ

2020 թվականի համար տվյալ հոդվածով աշխատավարձին և դրան հավասարեցված վճարներին նախատեսվում է հատկացնել 277056.3 հազար դրամ: Հաշվի առնելով, որ ներկայացվող ծրագրային հայտի համաձայն 2020 թվականի համար նախատեսվում է կատարվող դատական փորձաքննությունների քանակների որոշակի աճ 2019 թվականի կանխատեսվող համապատասխան ցուցանիշների նկատմամբ, ՀՀ ԳԱԱ նախագահի հետ համաձայնեցմամբ և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կողմից 21.12.2018 թվականին հաստատված Կազմակերպության կառուցվածքային սխեմայով 228 հաստիքային միավորի սահմաններում 2020 թվականին նախատեսվում է փորձաքննությունների կազմակերպումն ու իրականացումն ապահովող աշխատակիցների 2019 թվականի հաստիքացուցակով նախատեսված թվաքանակի ավելացում: Նախատեսվող գումարը կապահովի անմիջականորեն փորձաքննությունների կատարմանը ներգրավված շուրջ 170 աշխատողների աշխատանքի վարձատրության որոշակի չափը, սակայն հարկ է նշել, որ տվյալ գումարը չի ապահովում փորձաքննությունների հետ առնչվող անձնակազմի աշխատանքի դիմաց լիարժեք վարձատրությունը:

2020 թվականի ընթացքում նախատեսվում է փորձագիտական ստորաբաժանումների հզորությունների ավելացման և զարգացման համար անհրաժեշտ մասնագիտացում և փորձ ունեցող փորձագետներով համալրում, մասնագետների, առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի պայմաններում փորձագետների վարձատրության չափի որոշակի ավելացում, չնայած այն հանգամանքին, որ ավելացման արդյունքում վերջիններիս միջին աշխատավարձն

այնուամենայնիվ ավելի ցածր կլինի, քան Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք փորձագիտական կառույցներում, հատկապես մասնավոր և առտերկրի նմանատիպ կառույցներում, ինչպես նաև որոշ պետական մարմիններում աշխատող փորձագետների միջին աշխատավարձերի համեմատ: Տվյալ տեսանկյունից կարևոր է նաև նշել, որ աշխատակիցներին պատշաճ վարձատրություն ապահովելու նպատակով 2020 թվականի համար տվյալ ծրագրով նախատեսված ֆինանսավորման գերակշիռ մասը կնպատակաուղղվի աշխատավարձի ֆոնդին:

Հարկ է նշել, որ նախատեսվող 277056.3 հազար դրամ գումարից պետական բյուջե վճարվելու է շուրջ 88658.0 հազար դրամի չափով եկամտային հարկ, սոցիալական և դրոշմանիշային վճարներ:

Ապրանքների և նյութերի ձեռքբերում

Տվյալ հոդվածով 2020 թվականի համար նախատեսվում է հատկացնել 17915,0 հազար դրամ՝ հաշվի առնելով փորձագիտական ծառայությունների ծավալների սպասվող աճը և նրանց արդյունավետ իրականացման համար ձեռք բերվելիք անհրաժեշտ ապրանքների և նյութերի գնաճը: Հարկ է նշել, որ ինչպես փորձագիտական աշխատանքների կազմակերպման և իրականացման (ըստ ժամանակակից տեխնոլոգիական պահանջների), այնպես էլ վերջիններիս արդյունավետությունը և պատշաճ որակն ապահովող համապատասխան գիտագործնական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ է մշտապես հագեցնել Կազմակերպության փորձագիտական (մասնագիտացված) ստորաբաժանումները՝ հատկապես կապված 2020 թվականի ընթացքում վերջիններիս շարունակական ձևավորման և հզորությունների զարգացման հետ համապատասխան գույքով, սարք-սարքավորումներով, անխափան ապահովելով վերջիններս ստանդարտ նյութերով, էտալոնային նմուշներով, քիմիական ռեակտիվներով, ախտորոշիչ շիժուկներով, դեղանյութերով, տեխնիկական և բժշկական նշանակության պարագաներով, ֆոտոթղթով, ռենտգեն, ֆոտո-տեսաձայնագրային և այլ ժապավեններով, սկավառակներով, համակարգչային տպիչների քարտրիջներով և ներկերով, թղթով և գրասենյակային ապրանքներով և այլ նյութերով: Հատուկ պետք է նշել, որ սույն հոդվածով նախատեսված գումարով բնականաբար հնարավոր կլինի ձեռք բերել վերը նշված ապրանքների տեսականին միայն նվազագույն քանակություններով: Նշված ապրանքներից ձեռք կբերվեն նաև «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը ֆինանսավորող այլ ծրագրերով՝ մասնավորապես գիտության բազային ֆինանսավորմանը վերաբերող, պայմանագրային (ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող եկամուտների հաշվին) և այլ, նամանավանդ, որ թվարկված արժեքների գրեթե ողջ տեսականին օգտագործվում է փորձաքննությունների կատարմանն անմիջականորեն վերաբերող գիտագործնական աշխատանքների ընթացքում: Նշված ապրանքատեսակների ձեռք բերումը Կազմակերպության կողմից կիրականացվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների գործընթացը կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Կոմունալ ծառայությունների վճարներ

2020 թվականի համար տվյալ հոդվածով նախատեսվում է հատկացնել 7984,5 հազար դրամ, որը ներառում է ջեռուցման ծախսը բնական գազի միջոցով, էլեկտրաէներգիայի՝ կապված լուսավորության, փորձաքննությունների կատարմանը առնչվող համակարգչային տեխնիկայի և լաբորատոր սարքավորումների շահագործման հետ, ինչպես նաև ջրի ծախսը՝ կապված լաբորատոր աշխատանքների ծավալների հետ: Բնականաբար հոդվածում նշված գումարը կարող է ընդամենը մասնակիորեն ծածկել Կազմակերպության ծախսերը այդ ուղղություններով, վերջիններիս զգալի մասը նախատեսվում է ծախսաձածկել այլ ֆինանսական ծախսային ծրագրերով:

Կապի ծառայության ծախսեր

2020 թվականի համար սույն հոդվածով նախատեսվում է հատկացնել 2307,0 հազ. դրամ: Նշված գումարը հաշվարկելիս հաշվի է առնվել Կազմակերպության երկու մասնաշենքերի և ախտաբանական կենտրոնի երկրորդ մասնաշենքում արդեն իսկ գործող հեռախոսակետերի քանակը, ինչպես նաև տեղադրված հզոր ինտերնետային համակարգը, որն ուղղակիորեն ապահովում է Կազմակերպության բնականոն աշխատանքը, հատկապես հաշվի առնելով նաև համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնի կողմից ցանցային հանցագործությունների գծով իրականացվող փորձաքննությունների կարողությունների պատշաճ ապահովման անհրաժեշտությունը: Պետք է նշել, որ նախատեսված գումարը կարող է ապահովել միայն վերոնշված ինտերնետային ծառայությունների ձեռքբերումը և փորձաքննությունների իրականացման ապահովման հետ կապված հեռախոսակապից օգտվելու չափաքանակի մասնակի ծախսաձածկումը: Հատուկ պետք է նշել, որ ֆիքսված /քաղաքային/ հեռախոսակապի ամսական բաժանորդային վճարը և ծառայողական նպատակներով միջքաղաքային, միջազգային և տեղական էլից խոսակցությունների վարձավճարները հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N1956-Ն որոշմամբ սահմանված առավելագույն սահմանաչափերին համապատասխան:

Գործուղման ծախսեր

2020 թվականին Կազմակերպության կողմից իրականացվող փորձաքննությունների տեսականու և հատկապես քանակների կանխատեսվող աճից ելնելով, նախատեսվում է նաև փորձագետների գործուղումների և ծառայողական ուղևորությունների քանակների զգալի ավելացում նախևառաջ ՀՀ մարզեր և ԼՂՀ՝ դատական նիստերին մասնակցությունների և իրականացվող փորձաքննությունների համար անհրաժեշտ ելակետային տվյալների ձեռքբերման և փորձագիտական հետազոտությունների իրականացման հետ կապված: Ելնելով ահրաժեշտությունից, նախատեսվում են գործուղումներ նաև արտերկրներ՝ ինչպես ԱՊՀ երկրներում, այնպես էլ որոշ եվրոպական երկրներում կազմակերպվող գիտա-գործնական սեմինարներին, համաժողովներին, գիտաժողովներին, հատկապես վերապատրաստման և ներ

մասնագիտացման (կատարելագործման) դասընթացներին Կազմակերպության համապատասխան աշխատակիցների մասնակցությունների հետ կապված (հատկապես կապված նոր փորձագիտական ուղղությունների ուսումնասիրման և ներդրման հետ): Նշված նպատակներն իրականացնելու համար տվյալ հոդվածով տվյալ ծախսային ծրագրով 2020 թվականի համար նախատեսվում է 5400,0 հազար դրամ, հաշվի առնելով 29.12.2005թ-ի ՀՀ Կառավարության N 2335-Ն որոշումը: Սակայն անգամ այդ պարագայում տվյալ հոդվածում նշված գումարը կարող է ընդամենը մասնակի ծածկել Կազմակերպության ծախսերը տվյալ ուղղություններով, որոնց զգալի մասը նախատեսվում է ծախսածածկել նաև այլ ֆինանսական ծախսային ծրագրերով:

Այլ ծախսեր

Տնտեսագիտական դասակարգման տվյալ հոդվածով գումարը նախատեսելիս հաշվի են առնվել Կազմակերպության սարքավորումների պարտադիր ամենամյա ստուգաչափման, համակարգչային տեխնիկայի սպասարկման, սուրհանդակային կապի, ISO և միջազգային այլ ստանդարտների և համակարգերի գծով փորձագիտական գործունեության հավատարմագրման համար խորհրդատվական, վերապատրաստման և նեղ մասնագիտացման (կատարելագործման) ուսուցման ծառայությունների ձեռքբերումները, ինչպես նաև հատուկ, թանկարժեք սարքավորումների բացակայության պատճառով որոշ փորձաքննությունների իրականացման ապահովման նպատակով այլ մասնագիտացված կառույցներից /որոնք ունեն հանրապետությունում եզակի, առանձնակի, թանկարժեք, ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարքավորումներ/ պահանջվող հետազոտությունների ձեռքբերումը, ինչպես նաև հյուսվածքաբանական փորձաքննությունների իրականացման ապահովման նպատակով հյուսվածքաբանաքիմիական փորձաքննությունների բաժանմունքի (ներառյալ ախտաբանական կենտրոնի) համար վարձակալած տարածքի վարձավճարները և մի շարք այլ ծախսեր: Նշված հոդվածով 2020 թվականի համար նախատեսվում է հատկացնել 5059,7 հազար դրամ: Նախատեսված գումարը բնականաբար միայն կարող է մասնակիորեն ծածկել վերոնշյալ և Կազմակերպության կողմից փորձաքննությունների կատարման հետ առնչվող անհրաժեշտ որոշ տեսակի սարքավորումների, գույքի վարձակալության ծախսերը, ինչպես նաև ապահովել մի շարք այլ ծառայությունների ձեռքբերումը:

Կապիտալ ծախսեր (գույք, սարք-սարքավորումներ, ոչ նյութական ակտիվներ)

Նախատեսվում է 2020 թվականի համար նվազագույնը 9317,7 հազար դրամի սահմաններում կապիտալ ակտիվների ձեռքբերումը՝ լիցենզիաների, սերտիֆիկատների, համակարգչային նոր ծրագրերի, որոշ գրասենյակային գույքի և համակարգչային տեխնիկայի, հատուկ մասնագիտական սարքեր-սարքավորումների, դրանց կոմպլեկտավորող մասերի /օրինակ՝ բալոնների, ռեդուկցիոն սարքերի/ և այլն, որոնք անմիջականորեն նպատակաուղղված են փորձաքննությունների իրականացման համար: Հարկ է նշել, որ Կազմակերպության բաժինները և լաբորատորիաները համապատասխան գույքով և որոշ խիստ անհրաժեշտ սարք-սարքավորումներով (որոնց տրամադրումը նախատեսված չէ հայ-

ամերիկյան համագործակցության INL ծրագրով) համալրելու և Կազմակերպության անխափան գործունեությունն ապահովելու նպատակով կպահանջվեն համապատասխան միջոցներ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի գծով: Այդպիսիք խիստ անհրաժեշտ են, քանի որ համաձայն վերոնշյալ համագործակցության մասին համաձայնագրի, ԱՄՆ-ի կառավարությունը մինչ 2018 թվականը աջակցել է և շարունակելու է աջակցել միայն սահմանափակ ուղղվածություն ունեցող, հիմնականում անդրազգային հանցավորության դեմ պայքարի ծրագրերում առանցքային նշանակություն ունեցող մի քանի լաբորատորիաների հագեցվածության ապահովմանը՝ հիմնականում բարձրակարգ, ժամանակակից տեխնոլոգիական և առավել թանկարժեք սարքավորումներով: Նշված ձեռքբերումները կատարվելու են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և գնումների գործընթացը կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված ընթացակարգերով: Բնականաբար սույն հոդվածով նախատեսված գումարը չի կարող ծածկել Կազմակերպության բոլոր անհրաժեշտ ծախսերը տվյալ ուղղություններով և վերջիններիս զգալի մասը նախատեսվում է նաև ծախսաձածկել այլ ֆինանսական ծախսային ծրագրերով:

Հարկեր (պետական բյուջեին կատարվող վճարումներ)

2020թ.-ի համար տնտեսագիտական դասակարգման հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ հոդվածով նախատեսվում է 65180,0 հազար դրամ:

Ելնելով վերոշարադրյալից, 2020 թվականի համար բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով ներկայացնում ենք 390220,3 հազար դրամի չափով ֆինանսավորման հայտ:

2020-2022 թվականների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային Կազմակերպությունում նախատեսվում է փորձագիտական նոր տեսակների և ենթատեսակների, հետազոտական մեթոդների և մեթոդիկաների ներդրում, գիտականորեն հիմնավորված նոր ուղղությունների մշակում և իրականացում, ինչպես նաև՝ կատարելագործել և զարգացնել նախորդ տարիներին ներդրված փորձագիտական տեսակների և ենթատեսակների հնարավորությունները, որոնք հիմնված են նորագույն տեխնոլոգիաների վրա, իրականացվում են արդյունավետ /օպտիմալ/ փորձագիտական մեթոդիկաների և ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարք-սարքավորումների կիրառմամբ: Կազմակերպությունը նաև ծրագրում է տարեցտարի շարունակել բարձրացնել համագործակցության մակարդակը միջազգային մի շարք հեղինակավոր գիտական և փորձագիտական կառույցների հետ՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ կազմակերպել գիտական աշխատանքների իրականացումը կազմակերպությունում, ինչպես նաև՝ առավելագույնս ուսումնասիրել փորձագիտական բնագավառի համար կարևորագույն նշանակություն ունեցող գիտության այս կամ այն ոլորտի միջազգային առաջավոր փորձը՝ հետազայում այն Կազմակերպության մասնագիտական ստորաբաժանումներում ներդնելու և կիրառելու նպատակով:

2020-2022 թվականներին Կազմակերպությունը պլանավորում է ձեռնամուխ լինել փորձագիտական տվյալների բազաների ընդլայնման և նորերի կազմավորման ըստ առանձին գիտական ուղղությունների՝ հիմնված ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա, զարգացնել գիտական ոլորտները, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային ստանդարտներին, մասնավորապես նախատեսվում է՝

- մշակել և տեղայնացնել «LINTAB» LTM06-E մոդելի սարքից և TSAP-Win համակարգչային ծրագրից օգտվելու ընթացակարգը և սկսել նոր գործընթաց դատափորձագիտական բնագավառում դենդրոխրոնոլոգիական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման ուղղությամբ,

- մշակել և տեղայնացնել «PC Crash» համակարգչային ծրագրի ընթացակարգը և սկսել նոր գործընթաց դատափորձագիտական բնագավառում ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների (ՃՏՊ) մոդելավորման բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման ուղղությամբ,

- վերլուծել և արդիականացնել Կազմակերպությունում գործող բոլոր ստորաբաժանումներին վերաբերող համապատասխան հրահանգները և ընթացակարգերը,

- իրականացնել գործիքային եղանակներով կենսաբանական օբյեկտների /մեզ, արյուն/ հետազոտություններ՝ տոքսիկոլոգիական փորձաքննություններում առկա մեթոդիկաների կատարելագործման, ինչպես նաև նոր գործիքային մեթոդների ներդրման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է նաև վերանայել և նորացնել բաժանմունքում գործող հետազոտական մեթոդիկաների կիրառման ընթացակարգերը,

- նախատեսվում է արդեն իսկ շահագործվող ժամանակակից «55 AA» մոդելի բոցային և «200 AA» մոդելի գրաֆիտային ստոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերով իրականացնել աշխատանքներ նոր մեթոդների մշակման ուղղությամբ, մասնավորապես՝ նմուշառման, հողերում, ջրերում և այլ օբյեկտներում ծանր մետաղների քանակական հետազոտությունների իրականացման նպատակով,

- իրականացվելու են աշխատանքներ նկարների ստեղծման ժամկետների հավաստման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների շտեմարանների համալրում ուղղությամբ, ինչպես նաև շարունակվելու են Կազմակերպությունում իրականացվող մշակութային արժեքների փորձաքննությունների ընթացքում ստացվող տվյալների և մասնագիտական գրականությունում առկա տեղեկատվության համադրման, հետազոտման և վերլուծական աշխատանքները:

- նախատեսվում է ձեռք բերել միջազգային կառույցներում առկա մեթոդիկաներ և ստեղծել հնագիտական-պատմական տվյալների շտեմարան կապված գերեզմանաշտերի, եկեղեցիների և այլ կրոնական կառույցների, հնագիտական առարկաների կամ դրանց բեկորների վերաբերյալ,

- հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Կազմակերպությունում առկա է ևս մեկ նոր ձեռք բերված «NITON XL3t» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորը ունի երկու հավելյալ կարևոր ռեժիմներ, 2018թ. շարունակվել են արդեն իսկ մշակված և հաստատված «Niton XL3T» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով աշխատելու մեթոդի և ընթացակարգի հիման վրա մետաղների և դրանց համաձուլվածքների, այդ թվում՝ մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի հանքային բաղադրակազմերի փորձագիտական

հետազոտությունները: Ներկայումս ընթանում են մետաղական շերտերի՝ ծածկույթների, ներկանյութերի, կենցաղային, այդ թվում՝ կերամիկական առարկաների մեջ ծանր մետաղների հետազոտության, ինչպես նաև նմուշապատրաստման օպտիմալ մեթոդների մշակման և գործող մեթոդի ու ընթացակարգի լրամշակման հետ կապված աշխատանքներ, որոնք ունեն շարունակական բնույթ:

- 2020-2022 թվականներին շարունակական բնույթ են կրելու դեռևս նախորդ տարիներին սկսած մի շարք այլ փորձագիտական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքները, այդ թվում՝ փամփուշտների և պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի, օժանելիքների, օրգանական լուծիչների, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, թղթադրամների, գնդիկավոր գրելագործիքների, պայթուցիկ նյութերի և դրանց պայթյունի արգասիքների, մասս-սպեկտրոմետրի, «HP-6890» մոդելի գազ-քրոմատագրման սարքի և «IR Prestige-21» տիպի Ֆուրյե ձևափոխմամբ ինֆրակարմիր սպեկտրոմետրի կիրառմամբ և այլն:

2020-2022 թվականներին Կազմակերպությունում նախատեսվում է սկսել նոր արդիական ուղղություններով որոնողական աշխատանքներ, որոնք դեռևս Հայաստանի Հանրապետության փորձագիտության բնագավառում չեն իրականացվել, ինչը շատ կարևոր է ժամանակին արձագանքելու այսօրվա մարտահրավերներին, ինչպես նաև ներդնելու ողջ ներուժը փորձագիտության բնագավառում ընդլայնելու փորձագիտական տեսակները և ենթատեսակները, մասնավորապես՝

- Փորձագիտական տվյալների բազաների կազմավորում ըստ առանձին գիտական ուղղությունների՝ հիմնված ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա,
- Հայաստանի Հանրապետությունում զարգացնել, ըստ առանձին գիտական ոլորտների, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային ստանդարտներին,
- Քրեագիտական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների նոր, արդիական հեռանկարային ուղղությունների ձևավորում,
- Հայաստանի Հանրապետությունում դատափորձագիտական վիճակագրության համակարգի ձևավորում և ներդրում: Փորձագիտական բնույթի աշխատանքներում՝ արդյունքների վերլուծության և մշակման ընթացքում, հավանականության տեսության մեթոդների օգտագործում, այդ թվում՝ Բայեսյան օրինաչափությունների կիրառմամբ,
- Փաստաթղթերի ռեկվիզիտների հարաբերական վաղեմության որոշման քրեագիտական փորձաքննության տեսական և մեթոդաբանական հիմունքների կատարելագործում, նորագույն տեխնոլոգիաների և փորձագիտական մեթոդների ներդրում,
- Փորձագիտական բնույթի աշխատանքների (հետազոտություններ, տեխնիկական փորձարկումներ, վերլուծություններ և այլն) հնարավորությունների ընդլայնման և որակի բարձրացման նպատակով Փորձաքննությունների ազգային բյուրոյի միջազգային հավատագրում՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 միջազգային ստանդարտների պահանջների,
- Փորձագիտություն բնագավառի աշխատանքներում հսկողության ուժեղացում, նորագույն հետազոտական, գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում, նորերի մշակում:

Վերոնշյալ հանգամանքները հանգեցնելու են ծախսատար՝ մասնավորապես նորագույն սարքավորումներով և ժամանակակից տեխնոլոգիաներով բյուրոյում իրականացվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը, ինչն իր հերթին կհանգեցնի Կազմակերպությանը նշանակվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը և քանակի աճին: Այդ առումով պետք է նաև նշել, որ, բնականաբար, նախատեսվում է ավելացնել նաև գործող բաժինների կարողությունները և կազմավորել որոշ նոր ստորաբաժանումներ:

Պետք է արձանագրել, որ մինչ օրս վերոնշյալ բոլոր գործընթացները հանգեցրել են կազմակերպությունում իրականացվող գործառույթների, մասնավորապես փորձաքննությունների ընթացքում կատարվող հետազոտությունների, տեխնիկական փորձարկումների, գնահատումների, վերլուծությունների և այլն ու կազմվող փորձագիտական եզրակացությունների նկատմամբ պատվիրատուների՝ իրավապահ մարմինների և դատարանների վստահության էապես բարձրացմանը, ինչպես նաև իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և արժանահավատության բարձրացմանը, ինչն իր հերթին նպաստել է նշանակվող դատական փորձաքննությունների քանակային աճին:

1.3. Հիմնական խնդիրները

Սույն ծրագրի հիմնական խնդիրն է՝

Քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակված դատական փորձաքննությունների կազմակերպումն ու իրականացումը՝ համապատասխան պատշաճ որակի և դատավարական ու մեթոդական ընթացակարգերի պահպանմամբ:

2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

2.1 Նպատակները

Քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող դատական փորձաքննությունների պատշաճ իրականացում:

Տվյալ ծախսային ծրագրի իրականացման արդյունքում պետական պատվերի շրջանակներում փորձագիտական ծառայություններ կմատուցվեն նախաձեռնող այնպիսի իրավասու մարմիններին, ինչպիսիք են քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինները՝ Հայաստանի Հանրապետության դատարանները, Հայաստանի Հանրապետության դատախազությունը, Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի

Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը և փոքր թվով՝ Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության համապատասխան լիազորություններ ունեցող այլ մարմինները:

2.2. Գերակայությունները

2017 թվականի ընթացքում կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ դատաքիմիական /թունաբանական/ (2776 հատ), ապրանքագիտական (1092 հատ), նյութագիտական (1025 հատ), փաստաթղթաբանական (939 հատ), հետքաբանական (816 հատ), ձեռագրաբանական (727), դատաբժշկական (579 հատ), համակարգչատեխնիկական (506 հատ) փորձաքննությունների տեսակները:

2018 թվականի ընթացքում Կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ նյութագիտական (1987 հատ), ապրանքագիտական (1166 հատ), փաստաթղթաբանական (945 հատ), դատաքիմիական /թունաբանական/ (861 հատ), ձեռագրաբանական (802), կենսաբանական (606 հատ), հետքաբանական (575 հատ) փորձաքննությունների տեսակները:

Հիմք ընդունելով 2017-2018 թվականների ընթացքում կատարված փորձաքննությունների տեսակների գերակայությունը կարելի է կանխատեսել, որ այն կրելու է շարունակական աճը պահպանող բնույթ նաև 2020-2022 թվականների համար:

3. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Հիմք ընդունելով վերոգրյալը, և նախորդ տարիների ընթացքում իրականացված փորձագիտական ծառայությունների տեսականու ընդլայնումը և 2017-2018 թվականների ընթացքում արդեն իսկ տեղ գտած զգալի քանակական աճը, 2020-2022 թվականների համար ձեռք բերվող դատական փորձաքննությունների գծով կանխատեսվում է տարեկան միջինում նվազագույնը 10%-ի չափով ֆինանսավորման աճ:

Համաձայն վերը նշված համեմատականների և կանխատեսումների անհրաժեշտ է պետական բյուջեի 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների

ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով (որը 2019 թվականի համար կազմել է 284359,0 հազ. դրամ), 2020 թվականի համար նախատեսել 390220,3 հազ. դրամ, 2021 թվականի համար նախատեսել 429242,3 հազ. դրամ, իսկ 2022 թվականի համար՝ 472166,6 հազ. դրամ, ինչը, ինչպես արդեն նշվել է, ենթադրում է հատկացումների միջին տարեկան շուրջ 10%-ի չափով աճ՝ հաշվի առնելով իրականացվող փորձագիտական ծառայությունների տեսականու (այդ թվում ենթատեսակների և տեխնոլոգիական ուղղությունների) տարեցտարի աստիճանաբար ընդլայնումը և որոշակի քանակային աճը, ինչպես նաև փորձաքննությունների պատշաճ որակի ապահովման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով համամասն ավելացումներ են նախատեսված տնտեսագիտական դասակարգման համապատասխան հոդվածներով:

Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարները կկազմեն համապատասխանաբար 2020 թվականին՝ շուրջ 277056,3 հազ.դրամ, 2021 թվականին՝ շուրջ 304761,9 հազ. դրամ, 2022 թվականին՝ շուրջ 335238,1 հազ.դրամ: Այլ ընթացիկ ծախսերը կկազմեն համապատասխանաբար 2020 թվականին՝ շուրջ 5059,7 հազ.դրամ, 2021 թվականին՝ շուրջ 5565,7 հազ.դրամ, 2022 թվականին՝ շուրջ 6122,2 հազ.դրամ: Հարկերը (ԱԱՀ-ի և շահութահարկի գծով) կկազմեն համապատասխանաբար 2020 թվականին՝ շուրջ 65180,0 հազ.դրամ, 2021 թվականին՝ շուրջ 71698,0 հազ.դրամ, 2022 թվականին՝ շուրջ 78867,8 հազ.դրամ, իսկ սարք սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, տնտեսական գույքի, ապրանքների, ծառայությունների և այլ կապիտալ ակտիվների ձեռք բերման ծախսերը համապատասխանաբար կկազմեն 2020 թվականին՝ շուրջ 42924,3 հազ.դրամ, 2021 թվականին՝ շուրջ 47216,7 հազ. դրամ, 2022 թվականին՝ շուրջ 51938,4 հազ. դրամ:

3.2. Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

2020-2022 թվականների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում նախատեսվում է փորձագիտական նոր տեսակների և ենթատեսակների, հետազոտական մեթոդների և մեթոդիկաների ներդրում, գիտականորեն հիմնավորված նոր ուղղությունների մշակում և իրականացում, ինչպես նաև՝ նախատեսվում է կատարելագործել և զարգացնել նախորդ տարիներին ներդրված փորձագիտական տեսակները և ենթատեսակները, որոնք հիմնված են նորագույն

տեխնոլոգիաների վրա, իրականացվելու են աշխատանքներ արդյունավետ /օպտիմալ/ փորձագիտական մեթոդիկաների և ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարք-սարքավորումների կիրառմամբ: Կազմակերպությունը նաև ծրագրում է տարեցտարի շարունակել բարձրացնել համագործակցության մակարդակը միջազգային մի շարք հեղինակավոր գիտական և փորձագիտական կառույցների հետ՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ կազմակերպել գիտական, նաև փորձագիտական աշխատանքների իրականացումը կազմակերպությունում, ինչպես նաև՝ առավելագույնս ուսումնասիրել փորձագիտական բնագավառի համար կարևորագույն նշանակություն ունեցող գիտության այս կամ այն ոլորտի միջազգային առաջավոր փորձը՝ հետազայում այն կազմակերպության մասնագիտական ստորաբաժանումներում ներդնելու և կիրառելու նպատակով:

2020-2022 թվականներին կազմակերպությունը պլանավորում է ձեռնամուխ լինել փորձագիտական տվյալների բազաների ընդլայնման և նորերի կազմավորման ըստ առանձին գիտական ուղղությունների՝ հիմնված նաև ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա, զարգացնել գիտական ոլորտները, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային չափանիշներին, մասնավորապես նախատեսվում է՝

- մշակել և տեղայնացնել «LINTAB» LTM06-E մոդելի սարքից և TSAP-Win համակարգչային ծրագրից օգտվելու ընթացակարգը և սկսել նոր գործընթաց դատափորձագիտական բնագավառում դենդրոխրոնոլոգիական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման ուղղությամբ,

- մշակել և տեղայնացնել «PC Crash» համակարգչային ծրագրի ընթացակարգը և սկսել նոր գործընթաց դատափորձագիտական բնագավառում ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների (ՃՏՊ) մոդելավորման բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման ուղղությամբ,

- վերլուծել և արդիականացնել Կազմակերպությունում գործող բոլոր ստորաբաժանումներին վերաբերող համապատասխան հրահանգները և ընթացակարգերը,

- իրականացնել գործիքային եղանակներով կենսաբանական օբյեկտների /մեզ, արյուն/ հետազոտություններ՝ տոքսիկոլոգիական փորձաքննություններում առկա մեթոդիկաների կատարելագործման, ինչպես նաև նոր գործիքային մեթոդների ներդրման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է նաև վերանայել և նորացնել բաժանմունքում գործող հետազոտական մեթոդիկաների կիրառման ընթացակարգերը,

- նախատեսվում է արդեն իսկ շահագործվող ժամանակակից «55 AA» մոդելի բոցային և «200 AA» մոդելի գրաֆիտային ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերով իրականացնել աշխատանքներ նոր մեթոդների մշակման ուղղությամբ, մասնավորապես՝ նմուշառման, հողերում, ջրերում և այլ օբյեկտներում ծանր մետաղների քանակական հետազոտությունների իրականացման նպատակով,

- իրականացվելու են աշխատանքներ նկարների ստեղծման ժամկետների հավաստման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների շտեմարանների համալրում ուղղությամբ, ինչպես նաև շարունակվելու են Կազմակերպությունում իրականացվող մշակութային արժեքների փորձաքննությունների ընթացքում ստացվող տվյալների և մասնագիտական գրականությունում առկա տեղեկատվության համադրման, հետազոտման և վերլուծական աշխատանքները:

- նախատեսվում է ձեռք բերել միջազգային կառույցներում առկա մեթոդիկաներ և ստեղծել հնագիտական-պատմական տվյալների շտեմարան կապված գերեզմանդաշտերի, եկեղեցիների և այլ կրոնական կառույցների, հնագիտական առարկաների կամ դրանց բեկորների վերաբերյալ,

- հիմնվելով այն հանգամանքի վրա, որ կազմակերպությունում առկա է ևս մեկ նոր ձեռք բերված «NITON XL3t» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենսային անալիզատորը ունի երկու հավելյալ կարևոր ռեժիմներ, 2018թ. շարունակվել են արդեն իսկ մշակված և հաստատված «Niton XL3T» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենսային անալիզատորներով աշխատելու մեթոդի և ընթացակարգի հիման վրա մետաղների և դրանց համաձուլվածքների, այդ թվում՝ մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի հանքային բաղադրակազմերի փորձագիտական հետազոտությունները: Ներկայումս ընթանում են մետաղական շերտերի՝ ծածկույթների, ներկանյութերի, կենցաղային, այդ թվում՝ կերամիկական առարկաների մեջ ծանր մետաղների հետազոտության, ինչպես նաև նմուշապատրաստման օպտիմալ մեթոդների մշակման և գործող մեթոդի ու ընթացակարգի լրամշակման հետ կապված աշխատանքներ, որոնք ունեն շարունակական բնույթ:

- 2020-2022 թվականներին շարունակական բնույթ են կրելու դեռևս նախորդ տարիներին սկսած մի շարք այլ փորձագիտական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքները, այդ թվում՝ փամփուշտների և պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի, օծանելիքների, օրգանական լուծիչների, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, թղթադրամների,

գնդիկավոր գրելագործիքների, պայթուցիկ նյութերի և դրանց պայթյունի արգասիքների, մասս-սպեկտրոմետրի, «HP-6890» մոդելի գազ-քրոմատագրման սարքի և «IR Prestige-21» տիպի Ֆուրյե ձևափոխմամբ ինֆրակարմիր սպեկտրոմետրի կիրառմամբ և այլն:

2020-2022 թվականներին կազմակերպությունում նախատեսվում է սկսել նոր արդիական ուղղություններով որոնողական աշխատանքներ, որոնք դեռևս Հայաստանի Հանրապետության փորձագիտության բնագավառում չեն իրականացվել, ինչը շատ կարևոր է ժամանակին արձագանքելու այսօրվա մարտահրավերներին, ինչպես նաև ներդնելու ողջ ներուժը փորձագիտության բնագավառում ընդլայնելու փորձագիտական տեսակները և ենթատեսակները, մասնավորապես՝

- Փորձագիտական տվյալների բազաների կազմավորում ըստ առանձին գիտական ուղղությունների՝ հիմնված նաև ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա,
- Հայաստանի Հանրապետությունում զարգացնել, ըստ առանձին գիտական ոլորտների, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային ստանդարտներին,
- Քրեագիտական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների նոր, արդիական հեռանկարային ուղղությունների ձևավորում,
- Հայաստանի Հանրապետությունում դատափորձագիտական վիճակագրության համակարգի ձևավորում և ներդրում: Փորձագիտական բնույթի աշխատանքներում՝ արդյունքների վերլուծության և մշակման ընթացքում, հավանականության տեսության մեթոդների օգտագործում, այդ թվում՝ Բայեսյան օրինաչափությունների կիրառմամբ,
- Փաստաթղթերի ռեկվիզիտների հարաբերական վաղեմության որոշման քրեագիտական փորձաքննության տեսական և մեթոդաբանական հիմունքների կատարելագործում, նորագույն տեխնոլոգիաների և փորձագիտական մեթոդների ներդրում,
- Փորձագիտական բնույթի աշխատանքների (հետազոտություններ, տեխնիկական փորձարկումներ, վերլուծություններ և այլն) հնարավորությունների ընդլայնման և որակի բարձրացման նպատակով Փորձաքննությունների ազգային բյուրոյի միջազգային հավատագրում՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 միջազգային ստանդարտների պահանջների,
- Փորձագիտություն բնագավառի աշխատանքներում հսկողության ուժեղացում, նորագույն հետազոտական, գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում, նորերի մշակում:

Վերոնշյալ հանգամանքները հանգեցնելու են ծախսատար՝ մասնավորապես նորագույն սարքավորումներով և ժամանակակից տեխնոլոգիաներով Կազմակերպությունում իրականացվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը, ինչն իր հերթին կհանգեցնի կազմակերպությանը նշանակվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը և քանակի աճին: Այդ առումով պետք է նաև նշել, որ, բնականաբար, նախատեսվում է ավելացնել նաև գործող բաժինների կարողությունները՝ կազմավորելով նաև որոշ նոր ստորաբաժանումներ:

4. Ոլորտի (համակարգի) պետական հատվածի եկամուտները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

Դատական փորձաքննությունների /քրեադատավարական օրենսդրության շրջանակներում իրականացվող/ կատարման գծով կազմակերպությունը այլ եկամուտներ չունի:

5. Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր դատական փորձաքննությունների կատարման գծով կազմակերպությունը չունի:

**6. Ոլորտի (համակարգի) գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2020-2022թթ.
Ժամանակահատվածի համար**

**Աղյուսակ N 1. Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2020-2022թթ ծախսերի
կանխատեսում**

(հազ. դրամով)

			2019թ. հաստատված ծրուցե	Կանխատեսում		
Ծախսի դասիչ	Միջոցառ- ման դասիչ	Ծրագրերի անվանումը		2020թ.	2021թ.	2022թ.
		2	1	2	3	4
1013	11001	Փորձաքննությունների ծառայություններ, այդ թվում	284359.0	390220.3	429242.3	472166.6
		Ընթացիկ ծախսեր	277739.0	380902.6	418992.8	460892.1
		Կապիտալ ծախսեր	6620.0	9317.7	10249.5	11274.5
Ընդամենը պարտավորություններ, որից			284359.0	390220.3	429242.3	472166.6
Ընթացիկ ծախսեր			277739.0	380902.6	418992.8	460892.1
Ընթացիկ կապիտալ ծախսեր			6620.0	9317.7	10249.5	11274.5

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրեն՝

Ա. Հովսեփյան

Ֆինանսատնտեսագիտական
բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝

Ա. Մարգարյան

Ծրագրի հիմնավորումում նշված տեղեկատվության նախապատրաստման համար պատասխանատու
համակարգող ֆինանսատնտեսագիտական տեղեկատվության պատասխանատու, տնօրենի տեղակալ Խ.
Աբաջյան, տնօրենի տեղակալներ՝ Ա.Գահնապետյան, Պ.Ոսկանյան, ֆինանսատնտեսագիտական բաժնի
տնտեսագետ Ա.Գրիգորյան: